

Ս Ի Ո Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՆՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

Ն Ո Ր Շ Ր Զ Ա Ն

Խ. ՏԱՐԻ 1939



ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ՆՐՈՒՍԱՂԷՄ


Ս Ի Ո Ն

ԺԳ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1939

✻ ԴԵԿՏԵՄԲԵՐ ✻

ԹԻԻ 12



ԵՐԱՆԱՇՆՈՐՀ

Տ. Տ. ՍԱՀԱԿ Բ. ԽԱՊԱՅԵԱՆ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿԻՈՑ

(Սրբ Լուսարարայե եր Ս. Արքայոյ մէջ)

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ

Ա. Թ. Ո. Ռ. Մ. Ը. Ն. Ա. Լ. Թ. Ա. Փ. Ո. Ի. Բ. . . .

Դառնութեամբ լեցուն անակնկալի մը չեկան բոլոր անոնք, որոնք յուզումով շնեցին Ն. Ս. Օժուժեան Տանն Կիլիկիոյ Տ. Սահակ Բ. Սրբազան կաթողիկոսի վախճանումը: Իննսուն տարիներու բեզմ ունէր իր ուսերուն, իր մահը որքան ցաւառիթ, նոյնքան ընական կը նկատուի: Եւ արդէն մեծ ծերունին տարիներէ ի վեր ամփոփուած իր մենարանին մէջ՝ կը սպասէր անոր: Յաճախ անկեղծ յուզումով կրկնեց ժողովարձական գծառայա քոճն, ամէն անգամ որ զինք կանխեցին վաղամեռիկ ու թանկագին արժէքներ. սակայն չվայելեց Աւետարանի ծերունիին փառքն ու երանութիւնը, հակառակ իր երկար սպասումին: Նմանեցաւ Հռաքելի, որ անմխիթար իր զաւակներուն սուգը լացաւ: Իբրեւ վերջին ներկայացուցիչը իր սերունդին, անիկա կենդանի յիշատակ մը, շիջելափառ կոթող մըն էր երկու սերունդներու հանդիպման կէտին բարձրացող, կերպով մը օղակ ներկայ և անցեալ, այլևս տարանջատ, զոյգ շրջաններուն: Ի՞նչ եւ նմաններուն կորուստովը, տակաւ կ'անհետանան այն կամուրջները, որոնք ներկան ու անցեալը իրարու կ'առաքելին:

Տ. Սահակ կաթողիկոսի մահով մեր աչքերը անգամ մը եւ արցունքով կը նային ժամանակէ մը ի վեր իրարու ետեւ տապալող Հայ Եկեղեցւոյ անտառէն, այն կաղնիներուն, որոնք մեր Եկեղեցիին ու ցեղին ազնուագոյն զաւակները եղան, և մեր անցեալ կեանքի գորշ միօրինակութիւնը գեղեցկացուցին իրենց արժէքներով:

Տակաւին երէկ իրենց յաւիտենական հանգիստը մտան Տ. Բարգէն, Տ. Խորէն և Տ. Թորգոմ սրբազանները, հաշուելով միայն այս վերջին քանի մը տարիներու մեր Եկեղեցւոյ կորուստները: Կ'երթան մէկիկ մէկիկ, մեր նուիրապետական Աթոռներու ներկայացուցիչները, նօսրացնելով շարքերը մեր Եկեղեցական արժէքներուն: Շիջում մըն է անշուշտ այս մահը, արդար և լցեալը. բայց ան անգամ մը եւ մեր մտածումը կը մթազնէ կորուստովը բոլոր անոնց, որոնք հնադարեան մեծափարթամ աշտարակներու պէս ինկան յաջորդաբար, և սպասումով անոնց՝ որոնք տակաւ կ'ուշանան լեցնելու համար տեղերը առաջիններուն:

Տ. Սահակ կաթողիկոսի տարիներով բազմաշատ, և արդիւնքով ոչ նուազ պատկառելի կեանքը եղած է նուիրումի և զոհողութեանց շարք մը. աւելի երջանիկ ժամանակներու մէջ, թերեւ ան Կիլիկիոյ Աթոռին մեծագոյն կաթողիկոսներէն մին ճանչցուէր: Եթէ ճշմարիտ է այն խօսքը թէ մարդն է որ կը լեցնէ ժամանակը, նոյնքան ճիշդ է նաև, թէ ժամանակն է որ կը յայտնաբերէ մարդը: Ն. Ս. Օժուժեան կաթողիկոսութեան երեսունվեց տարիները այս վերջին տեսակետով բախտաւոր ու բեղմնաւոր չեղան, սակայն անոնք փորձաքարը եղան իրական արժէքներու յայտնումին իր մէջ: Կիլիկիոյ տարիներէ ի վեր անփառունակ Աթոռը տիուր իրադարձութիւններէն վերջ յանձին Տ. Սահակ կաթողիկոսի կը գտնէր իր խաղաղութիւնը, կը տիրանար իր երկար ատենէ ի վեր

կորսնցուցած վարկին, և կը պայծառանար կրթական, տնտեսական և հոգևոր կեանքի արդիւնքներովը, հակառակ կարգ մը աննպաստ հանգամանքներուն, որոնց մէջ կը տառապէր Աթոռը, երբ անոր իբր գահակալ կը կանչուէր ինք:

Յետադարձ երազ ակնարկ մը իր բազմաշատ տարիներու զործունէութեանը վրայ, ցոյց պիտի տայ արդարեւ թէ Տ. Սահակ կաթողիկոս իր խօսքով, իր զըշով, և իր զործունէութեան զանազան կողմերով կրօնականի արդիւնաւէտ կեանք մը ունեցած է: Շատ կանուխէն, իր սարկաւազութեան օրերէն նոյնիսկ, ուշադրաւ եղած էր ան իր զըշի և խօսքի շնորհներովը, թէ՛ իբր ուսուցիչ երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարանին, թէ՛ իբր Սիոնի խմբագիր, և թէ՛ իբրեւ երուսաղէմի Աթոռին նուիրակ ի Ռուսաստան:

Իր պատրաստած դասագրքերը, իր հմտալից ու համեղ յօդուածները, և իր խօսքի իւրաքանչիւր զրաւչութիւնն ու շնորհը, ժամանակի ուշադրաւ անձեւրէն մին ըրին զինք թէ՛ երուսաղէմի միաբանութեան՝ և թէ՛ ազդին մէջ: Իսկ իբրեւ եպիսկոպոս և լուսարարապետ իր զործունէութեան տասնօթ տարիները Ս. Աթոռոյ մէջ, շնորհիւ իր նախանձախնդրութեան և կորովին, զինք արժանի ըրած են երախտագիտութեան և համբաւի. հուսկ ապա բանալով անոր կիլիկիոյ կաթողիկոսութեան գլուխները:

Սակայն եկող տարիները խեթիւ նայեցան իրեն. 1909 ի կոտորածը, և համաշխարհային պատերազմը, խորտակեցին իր յոյսերն ու ջանքերը, և զինք վշտալի, աստանդակսն, ու բազմախոց հովիւր ըրին իր զարնուած ու խորտակուած հօտին, որուն հետ բաժնեց տարադրութեան ու աքսորի կեանքը, 'եւ ցմրուր քամեց ստուապանքի և արցունքի բաժակը, և իբրեւ նոր օրերու երեւման, դառնօրէն լացաւ իր և իրեններուն անստոյգ ճակատագիրը:

Պատերազմէն յետոյ, տարիներու անորոշութենէն եւ թափառումներէն վերջ, մինչև կիլիկիոյ կաթողիկոսութեան հաստատուիլը յԱնթիլիաս, ան մասնակից եղաւ իր ժողովուրդի ցաւերուն և ուրախութեանց, պահելով միշտ իր հոգեկան կորովը: Հայրապետանոցի կազմակերպութեան զապփարին տենչացողն ու երկնողը ինք եղաւ, երբ կ'ուզէր ապահով կուռանի մը կապել կիլիկիոյ հոգևոր իշխանութիւնը: Իսկ հոգեյոյս Բաբգէն Վեհափառի ջանքերով ամբողջացած, և Շահէ Սրբազանի ճիգերով զարդարուած ձեռնարկներու, այսինքն կաթողիկոսարանի, դպրոցի. և սպարանի արդիւնքները խորացուցին հիմերը աւագուտի մը վրայ նստած այդ հաստատութեան, և սիրոյ ու խնամքի նուիրումներով հասցուցին իր այսօրուան վիճակին: — Տ. Սահակ կաթողիկոս կը փակէ իր աչքերը մեծ չափով միխթարուած ի տես այս բոլորին, իրազործուած տասը տարիներուն իր Աթոռի հովանիին ներքև: Հանգիստ իր հոգիին:

* * *

Վիշտը որով համակուած է կիլիկիոյ Աթոռը, կը խոցէ խորապէս նաև Ս. Աթոռոյս հոգևոր Պետը, որուն հետ տարիներէ ի վեր թէ՛ իբր աշակերտ, թէ՛ իբր միաբանակից, և ապա բարեկամ սրտակցօրէն կապուած էր: Ինչպէս նաև Ս. Յակոբեանց բովանդակ միաբանութիւնը, որ կրկնապէս տխուր կը զգայ ինքզինքը, իր ծոցէն իսկ ելած այս փառաւոր կեանքը ստիպուած ըլլալով սզալ, իր դեռ չհանգչած վշտահար աչքերով:

ԽՄԲ.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ ՇՆՈՐՀԱԶԱՐԴ Տ. ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ(*)

Տ. Սահակ կաթողիկոս ծնած է Խարբերդի եղէգիս գիւղին մէջ 1849 Մարտ 25-ին: Հօր անունն էր մինի. Կարապետ, մօրը՝ Դոհար: Իր ականի անունը եղած է Գաբրիէլ: Մանկութեանը յաճախած է իր գիւղին դպրոցը, ուր ետքէն (16 տարեկանին) ուսուցիչ կարգուած է: Մանկութենէն ջոյց ստուած է եկեղեցասէր կոչում եւ 1866-ին Խարբերդի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ դպրութեան չորս աստիճանները ստացած է ձեռամբ Սսեցի Աջապահեան Յարութիւն եպս.ի, որ Նուիրակութեամբ այցելած էր Խարբերդ:

1867-ին իր հայրը զինք երուսաղէմ կը բերէ եւ կը ներկայացնէ Եսայի պատրիարքին որ կ'ընդունի զայն ժառանգաւորաց վարժարան(**):

1869 Սարկաւազ կը ձեռնադրուի Եսայի պատրիարքէն երկու այլ ընկերներու հետ եւ միասին կը դրկուին Կ. Պոլիս իրենց ուսումը շարունակելու անդ:

1871-ին կը վերադառնայ Երուսաղէմ եւ ժառ. վարժարանի մէջ ուսուցչութեան կը կոչուի: Իր աւանդած դասերը կ'ըլլան Բնապատմութիւն, Աշխարհագրութիւն եւ Կրօնը:

1877 Յուլիս 3-ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի Տ. Եսայի պատրիարքէն, վերակոչուելով Սահակ: Յաջորդ տարին կը ստանայ վարդապետական աստիճան:

1881-ին Ռուսաստանի Նուիրակ կարգուած է Տ. Մամբրէ վրդ. Մարկոսեանի հետ: Կը հանդիպին Էջմիածին եւ ժամանակի կաթողիկոս Տ. Դէորդ Դ.ի կարգադրութեամբ ինք կը ստանձնէ Այսր-Կովկասի Նուիրակութիւնը, Տ. Մամբրէ վրդ. Անդր-Կովկասի: Շուրջ հինգ տարի կը տեւէ իրենց Նուիրակութեան շրջանը:

1885 Յունուար 10-ին, երբ տակաւին Նուիրակ էր ինք ի Կովկաս, Միաբանական Ընդհ. Ժողովոյ կողմէ Ս. Աթոռոյս Լուսաբարապետ կ'ընտրուի: Նոյն տարւոյ Նոյ. 24-ին Տ. Մակար կաթողիկոսէն Նպիսկոպոս կը ձեռնադրուի Մամբրէ վրդ.ի հետ միասին:

Կովկասէն կը վերադառնայ 1886 Յունուար 9-ին եւ կը ստանձնէ Լուսաբարապետութեան պաշտօնը, որուն յարակից է Տնօրէն Ժողովոյ մշտական անդամակցութիւնը: Կը վերստանձնէ նաեւ ժառ. վարժարանի մէջ իր ուսուցչական նախկին պաշտօնը:

Սահակ եպս. իր լուսաբարապետութեան 17 տարիներու ընթացքին ջոյց կուտայ ծրարան գործունէութիւն. կարգի կը դնէ Ս. Աթոռոյ Մատենադարանը եւ կը ջուջակագրէ ձեռագիրները: Կը կարգաւորէ Դանձարանը եւ եկեղեցական անօթներու եւ սպասներու լաւ պահպանման համար ամէն ջանք ի գործ կը դնէ: 1892-ին, իբրեւ Երուսաղէմի Աթոռի Պատուիրակ, կը մասնակցի Տ. Մկրտիչ կաթողիկոսի ընտրութեան:

1898 Յուլիսին Կ. Պոլսոյ Պատրիարքութեան կողմէ Պատուիրակ կը նշանակուի հսկելու Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան Տ. Մկրտիչ Քէֆաիզեան կաթողիկոսի վախճանումէն վերջ: Հազիւ 1900-ի Փետրուարին կը հասնի Կիլիկիա եւ կը ձեռնարկէ իր պաշտօնին: Կը հարթէ բոլոր դժուարութիւնները, որոնք թուրք կառավարութեան կողմէ կը յարուցուէին եւ հազիւ 1901 տարւոյ վերջերք միայն կարելի կ'ըլլայ կաթողիկոսական ընտրութեան գործողութիւնները վախճանի մը յանգեցնել, Երուսաղէմի Միաբան Տ. Դէորդ եպս. նքնցեանի Կիլիկիոյ կաթողիկոս ընտրութեամբը. Նոյն տարին կը վերադառնայ Երուսաղէմ:

Դէորդ եպս. կը հրաժարի, եւ 1902 Հոկտեմ. 12-ին յԱտանայ գումարուած ընտրական Ժողովը միաձայնութեամբ Կիլիկիոյ Կաթողիկոս կ'ընտրէ Սահակ եպիսկոպոսը:

Նոյն տարւոյ Դեկտեմ. 9-ին կը ստացուի իր պետական հաստատման հրովարտակը:

(*) Այս նօթքը եւ քուականները բաղուած են Բարգէն Վեհափառի ճարտարապետ Պատմաբան Կաթողիկոսաց Կիլիկիայ գործէն, եւ Ա. Ալպոյանեանի Յարսա Տարեցոյցի 1928 թուոյ մէջ Սահակ Կաթողիկոսի Գահակալութեան Բանօրինակների տաքի գրած մէկ յօդուածէն (Էջ 254):

(**) Տես այս մասին Լուսաբարապետ կաթողիկոսի լուսագրութիւնը, Սին 1927, Թիւ 3 էջ 76:

1903 Յունուար 4-ին Օսմանեան պետութենէն պատուուած է առաջին աստիճանի Մեծիօտէ շքանշանով: Նոյն տարւոյ Յունուար 20-ին Երուսաղէմի Միաբանական Ընդհ. Ժողովոյ մէջ իր հրաժեշտի ատենաբանութիւնը կ'ընէ, եւ Միաբանութիւնը իր Յճամեայ բարւոք ծառայութեան համար շնորհակալութիւն կը բուէարկէ:

Նոյն տարւոյ Փետրուար 26-ին կը մեկնի Երուսաղէմէն եւ Մարտ 10-ին կը հասնի Սիւս, իր Աթոռը. Կաթողիկոսական օծումը կը կատարուի Ապրիլ 20-ին եւ յաջորդ շաբաթ կը կատարէ ամենամեծ հանդիսութեամբ իր անդրանիկ Միւռնոսթինէի արարողութիւնը:

Տ. Սահակ Կաթողիկոս թէ՛ իր օծման եւ թէ՛ Միւռնոսթինէի իր մատուցած Ս. Պատարագներուն կը յիշատակէ նաեւ Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետի — Տ. Մկրտիչ Կաթողիկոսի — անունը: — Թերեւս առաջին անգամն էր որ Կիլիկիոյ Կաթողիկոս մը կը յիշատակէր Ամենայն Հայոց Հայրապետի անունը. ինչ որ կը ցուցնէ այն անգին եւ խաղաղասէր ոգին որով տոգորուած էր նորընտիր Կաթողիկոսը:

Իր ընտրութեան առաջին տարին իսկ Կ. Պոլսոյ Ազգ. Ժողովին կը ներկայացնէ ընդարձակ տեղեկագիր մը ուր հանգամանօրէն կը պարզէ Կիլիկիոյ Թեմին ժամանակի կացութիւնը որ հեռի եղած է մխիթարական ըլլալէ:

1904-ին Կ'այցելէ Կ. Պոլիս Սոյո Աթոռին վերաբերեալ ինչ ինչ խնդիրներու կարգադրութեան համար, եւ կը ներկայանայ Սուլթանին ու կրկին կը պատուուի շքանշանով:

1909-ին Ատանայի կոտորածը եւ հրդեհը (որուն ընթացքին, ինք պաշարուած կը մնայ Սոյո մէջ) խորապէս կը խոցէ Ժողովրդանուէր Կաթողիկոսի սիրտը եւ չորս ամիս կը մնայ անդ, կորովի կերպով պահանջելով ջարդի պատասխանատուններուն պատժուիլը եւ անտէր անտուն մնացած Ժողովուրդի համար նիւթական օժանդակութիւն հայցելով: Այցելած է նաեւ շրջակայ գիւղեր ամէն տեղ ամոքել ջանալով տիրող ահաւոր թշուառութիւնը եւ մխիթարելով աղետահար Ժողովուրդը: — «Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը ճշմարիտ հովուապետի մը արժանիքները ցոյց տուաւ այս դառնութեան օրերուն, ինքզինքն գերազանցելով: Անիկա ամենուն համար խօսք էր գտաւ: Վրատեաները քաշայտեց, եռանդանները մեղմաց, սգաւորները մխիթարեց, յոյս, հաւատք եւ սէր ներշնչեց ամեն կողմ, եւ ազգամիջեան առեւտրութիւնները չմշտնջենաւորելու համար անյիշաչարութեան հրաւիրեց» (Տարեւ. 1928, էջ 279):

1915-ին Թուրքիոյ հայոց տարագրութիւնը կը սկսի նախ Կիլիկիայէն, Զէյթունի եւ Տէօրթ Եօլի հայութիւնը կը տեղահանուի եւ կը զրկուի Սիրիոյ անապատները ուր հետզհետէ կը հասնին Բարձր Հայքէն տեղահանուած հայոց խլեակները: Տարագրեալներու ամենախողորմիկ կացութիւնը կը ստիպեն Սահակ Կաթողիկոսը որ փութայ Հալէպ, չարիքը մեղմելու: Այս ուղղութեամբ մեծ ծառայութիւն կը մատուցանէ:

1915 Սեպտեմ. 12-ին Սոյո վանքն ալ կը դատարկուի, միաբանները կ'աքսորուին Հալէպ, միասին տանելով մայրավանքին կարեւոր սպանները: Ինք Սահակ Կաթողիկոս ալ տեղափոխուեցաւ կառավարական հրամանով Երուսաղէմ:

Թուրք կառավարութիւնը Մեծ Պատերազմին ընծայած պատեհութենէն օգտուելով՝ 1916 Յուլիս 28-ին նոր կանոնագրով մը վերջ տուաւ թէ՛ Սահմանադրութեան, թէ՛ Ազգամարի կաթողիկոսութեան եւ թէ՛ Պոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարքութեանց, եւ այս երեք բարձր պաշտօնները միացուց Տ. Սահակ Կաթողիկոսի անձին վրայ եւ զայն հրոչակեց ամբողջ Օսմանեան հպատակ Հայոց Կաթողիկոս — Պատրիարք, անոր ընակալայր սահմանելով Երուսաղէմի Հայոց Ս. Յակոբայ վանքը:

Անգլիական բանակներ երբ Երուսաղէմ մտնեցան՝ Թուրք կառավարութիւնը Սահակ Կաթողիկոսը, ինչպէս նաեւ բոլոր կրօնական պետերը, ղրկեց Դամասկոս: Վերջինս եւս զբաւուելով Դաշնակիցներէն Սահակ Կաթողիկոս մնաց անդ մինչեւ Զինադադար որովք ետք մերկանալով քաղաքական օրէնքով միայն իրեն պարտադրուած տիտղոսներէ եւ անուանական պաշտօններէ, զորս դժկամաբարութեամբ եւ, իր իսկ բառով, «բռնադատեալ համանակապետներէ, զորս Կաթողիկոս Կաթողիկոս Դաշնակիցներէն Կաթողիկոս Կաթողիկոս» կերպութեամբ միայն ստանձնած էր, կը մնայ վերստին «Կաթողիկոս Դաշնակիցներէն Կաթողիկոս»:

Դաշնակիցներու կողմէ Կիլիկիոյ զբաւումէն վերջ, իր Հօտին հետ միասին կը դառնայ իր Աթոռը, նոր յոյսերով եւ նոր ոգեւորութեամբ եւ կը նուիրուի հայրենիքի եւ Աթոռի

վերաշինութեան: — Սակայն քանի մը տարի վերջ Ֆրանսա-կը ստիպուի լքել Կիլիկիան ու հայեր վերստին կ'ենթարկուին տեղահանութեան եւ ջարդի արհաւիրքներուն, որոնք անգամ մը եւս կը խոցեն ծերունի եւ վշտահար Կաթողիկոսի հոգին: Իր ձօտի մեկնումէն վերջ, 1921 Դեկտեմբերին ինք եւս անդարձ կը բաժնուի իր պատմական Աթոռէն:

1924-ին Ֆրանսական կառավարութիւնը կը ճաննայ զինքը իբրեւ գերագոյն հոգեւոր պետը Սիւրիոյ բովանդակ Հայութեան եւ ինք վերստին կը նուիրուի անվհատ կորովով մը կազմակերպել իր Թեմը: Իր Աթոռը նախ կը հաստատէ Պէյրութ. ապա՝ Հալէպ:

Տ. Սակակ Կաթողիկոս քանակցութեանց կը մտնէ Երուսաղէմի Պատրիարքարանին հետ Սիւրիոյ Երուսաղէմապետական Թեմերը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան փոխանցելու խնդրով: 1929 Մարտ 6-ին Երուսաղէմի Միաբնական Ընդհ. Ժողովը միաձայնութեամբ իր հաւանութիւնը կուտայ փոխանցումին: Այսպէս Կիլիկիոյ աստանդական Կաթողիկոսութիւնը կ'օժտուի առաւել կամ նուազ չափով կազմակերպուած 5 Թեմերով:

Տ. Սահակ Կաթողիկոս զգալով իր ֆիզիքական ոյժերուն պակսիլը եւ մտահոգուած Կաթողիկոսութեան ապագայով՝ իրեն Արուսեակից կ'ընտրէ Տ. Բաբգէն եպս. Կիլէսէրեանը 1928-ին, որուն կաթողիկոսական օծումը կը կատարէ 1931 Ապրիլ 26-ին Հալէպի մէջ:

1930-ին Նիյր Իսթ Թըլէֆի սեպհական Անքիլիսսի որբանոցը իր շրջակայ կալուածներով կը դրուի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տրամադրութեան ներքեւ անուանական վարձքով մը: Սահակ Կաթողիկոս իր Աթոռը վերջնականօրէն կը հաստատէ անդ: Իր փափաքով եւ Բաբգէն Վեհափառի ջանքերով կը ձեռնարկուի Հոգեւոր Դպրանոցի մը բացման: Վարժարանը կը բացուի 1930 Հոկտ. 13-ին, ընդ տեսչութեամբ Շահէ Մ. Վրդ.ի:

1932-ին կը սկսի հրատարակուիլ Կաթողիկոսարանի «Հասկ» Թերթը:

1933 Յունիս 18-ին կը կատարուի ծերունազարդ հայրապետի 30 ամեայ Կաթողիկոսական Յոբելեանը: Այդ առթիւ Լիբանանի Հանրապետութեան Նախագահը անձամբ կը շնորհէ Լիբանանի Ա. Կարգի Արժանեաց Պատուի Նշանը: 1934-ին Նոյն Արժանեաց շքանշանը կը ստանայ նաեւ Սիւրիոյ Հանրապետութեան Նախագահէն:

1935-ին ուխտաւորաբար կ'այցելէ Երուսաղէմ եւ մխիթարուած կը վերադառնայ իր Աթոռը:

1936 Յուլիս 8-ին դժբախտութիւնը կ'ունենայ կորսնցնելու իր մեծանուն Աթոռակիցը:

1936 Յուլիս 20-ին Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ կը Նշանակէ Գեր. Տ. Պետրոս Արքեպս. Սարահեանը որ ինքզինքը կը նուիրէ առաւելաբար ներքին շինարարական աշխատանքի: — Իր վերջին տարիներուն, Բաբգէն Վեհափառը Աթոռակցութեան հրաւիրելէն ասդին, Տ. Սահակ Կաթողիկոս, տարիներու եւ վիշտերու բեռան ներքեւ ճնշուած գրեթէ քաշուած կեանք մը կ'ապրէր. Կաթողիկոսարանի եւ Թեմերուն վերին հսկողութեան եւ կազմակերպումի գործերը կը վարէր այնքան ձեռնահասօրէն Բաբգէն Կաթողիկոս, ու անոր մահէն վերջ՝ Պետրոս Արքեպիսկոպոս:

Իր յաւիտենական հանգիստը կը մտնէ «լի աւուրքք» իբրեւ 91 ամեայ Աւիփառ Հայրապետ մը, դառնութեան եւ տառապանքի բաժակը ցժրուր բամաճ, նոյն առնի սակայն՝ ի տես իր Աթոռին վերկենցաղման՝ մխիթարուած հոգւով:

Նորին Ս. Օծութեան 36 ամեայ կաթողիկոսական պաշտօնավարութիւնը եղած է «յարատեւ ճիգերու եւ անվհատ ջանքերու շարք մը: Ուրիշներու քանդածը վերաշինելու, աւերածը՝ վերանորոգելու, ջնջածը՝ վերահաստատելու համար». իրարու յաջորդող դժբախտութեանց մէջ, որոնք իր կեանքին ամենէն լայն բաժինը եղան, չէ գիտցած երբեք վնասիլ եւ յարատեւ եռանդով շարունակած է իր աշխատանքը միշտ յօգուտ՝ իրեն հետ համահաւասար աստիճանով տառապեալ իր Հօտին որուն իսկապէս քաջ Հովուապետը եղաւ ան:

Հանգիստ իր տառապակոծ ոսկորներուն:

Խաղաղութիւն իր բազմաշարքար հոգիին:

Օրհնութիւն իր յաւերժական յիշատակին:

* * *

Տ. Սահակ Կաթողիկոս ունեցած է նաեւ գրական արդիւնք, առաւելաբար երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանի իր ուսուցչութեան ընթացքին. ուստի իր գրական գործերը մեծ մասամբ դասագիրքեր են. կու տանք անոնց ցուցակը ժամանակագրական կարգաւ:

Ա. Համառօտ աշխարհագրութիւն, բնական, բաղաձայն, ուսումնական. 364 էջնոց միջակ ծաւալով գրքոյք մըն է. պատրաստած՝ իր Սարկաւագութեան ընթացքին. տպագրուած 1874-ին Ս. Աթոռոյ Տպարանին մէջ:

(Բ). Նոր Դասագիրք Տեղեւորագրութեան. 255 էջնոց միջակ ծաւալով: Կրկին տպագրութեամբ ի լոյս ընծայուած Ս. Աթոռոյ Տպարանէն (Ա. Տիպը՝ 1876-ին):

Գ. Բնական Պատմութիւն. 303 էջնոց գրքոյք մը կենդանաբանութեան, բուսաբանութեան, հանքաբանութեան եւ երկրաբանութեան մասին. պատկերազարդ, տպագրուած 1888-ին:

(Դ). Պատմութիւն Հին Կասկադանի. չորս անգամ տպագրութեամբ ի լոյս ընծայուած, (Ա. Տիպը 1878-ին, վերջինը՝ 1898-ին), 368 էջնոց պատկերազարդ գրքոյք մը, որ ցարդ կը գործածուի իբրեւ Հին Կտակարանի պատմութեան դասագիրք երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանին մէջ:

Ինք կազմած է երուսաղէմի Օրացոյցները, 1878 — 1881 եւ 1887 — 1902:

1873 — 1877 նշանակուած է խմբագրապետ ՍԻՄՆ ամսագրի: 1867 — 1869 Տեսուչ Տպարանի: Սիօնի մէջ ունի շատ մը յօդուածներ այլ եւ այլ նիւթերու շուրջ ժամանակի ոգւոյն եւ ըմբռնմանց համեմատ, ինչպէս նաեւ քանի մը ֆերբուածներ: Իր մէջ աւելի զօրաւոր եղած է բանասիրական հակումը (անշուշտ ժամանակի ըմբռնման համաձայն), այդ ուղղութեամբ հրատարակած է «Բաղդատութիւն տպագիր Սոկրատի եւ երուսաղէմի ձեռագրին» անունով գրքոյք մը 1896-ին, 95 էջերով:

1880-ին գրած է «Բովանդակութիւն ազգային սեպհականութեանց, բնկերովի իրաւանց, աւաւոգութեանց եւ սովորութեանց ի սեօրեական տեղիս». երկու տպագրութիւն տեսած (Ա. 1880-ին), 132 էջնոց կարեւոր գրքոյք մըն է, եւ կրնայ իբրեւ առաջնորդ ծառայել ուխտաւորաց ձեռքին մէջ: — Իր ի Կովկաս նուիրակութեան ընթացքին հանձնարած է նաեւ Շիրակ եւ մնացած անդ 50 օր. այդ առթիւ գիւղէ գիւղ շրջած եւ տեղւոյն բնակչութեան, կրթական վիճակի եւ բնութեան մասին ծանօթութիւններ հաւաքած է զորս յետոյ հրատարակած է «Արեւելեան Մամուլ»ին մէջ: Իսկ երկու տարի առաջ նոյն երկասիրութիւնը գրքոյքի ձեւին տակ հրատարակուեցաւ Անթիլիասի Տպարանէն «Յիսուս օր ի Շիրակ» անունով, 111 էջնոց:

Սակայն Տ. Սահակ Կաթողիկոսի մնայուն գործերը պիտի ըլլան իր Կոնգրակները, որոնց մէջ կը ցոլանայ ոչ միայն գրական շնորհ իր պարզ եւ անսեթեւեթ ձեւին մէջ, այլ նաեւ «հոգեւոր օծութեամբ լի աստուածաշնչական պատգամներ»:

Սահակ Վեհափառ ոչ միայն գործի եւ գրի մարդ եղած է այլ նաեւ ու առաւելաբար բնի մարդ. գիտցած է «սրտին խօսիլ ժողովուրդին» երբ բնմերէն Աւետարանի պատգամը հնչեցուցած է ի լուր իր հաւատացեալ շօտին: Իր խօսքին հմայքով անուն մը շինած էր իրեն թէ ասոյ յերուսաղէմ, թէ մանաւանդ իր Նուիրակութեան ընթացքին ի Կովկաս եւ վերջապէս ամբողջ իր Կաթողիկոսութեան ընթացքին:



ՇՆՈՐՀԱԶԱՐԴ Տ. ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ՝

«Ձիթ ինչ ծածուկ որ ոչ յայնցեսցի»
(ՂՈՒԿ. Ը. 17)

Երբ իննսուն տարի յառաջ Ռարբերգի Եղեգիս գիւղի ՄԿ. Կարապետ Ազա Ռապայեանի տան մի ժամուկ ծնաւ, ոչ ոք կրնար գուշակել որ այդ նորածինը սահմանուած էր այն դժուարին այլ մեծ գերբ կատարելու Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ ինչ որ նա կատարեց իր երկարամեայ կենաց միջոցին թէ՛ իբրեւ միաբան Երուսաղէմի Սրբոց Յակովբեանց Ուխտին և թէ՛ իբրեւ Սահակ Բ. Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ։ Անշուշտ իր ծննդեան միջավայրը, Եկեղեցին, զպրօքը, քահանայի և ուսուցչի խրատները նպաստեցին՝ իր սրտին մէջ գետեղւած աստուածային մանանխոյ հատին աճելուն և զարգանալուն։ Բայց անտարակոյս իր բարեպաշտ ծնողաց խնամքն ու ազդեցութիւնը ամենէն աւելի օժանդակեցին որ նա խախնամութեան ծածուկը իր ապագայ կենաց մէջ այնքան արդիւնաբեր և առաքելատիպ կերպով ի յայտ եկաւ։ Կարապետ ազա իր զաւակի աչալըջութիւնը և կըրօնասիրութեան ձգտումը նշմարելով՝ զայն իրեն հետ Երուսաղէմ կը տանի, երբ ինքն 1867 թուականին Ա. Քաղաքը կ'այցելէ և զայն Եսայի պատրիարքին կը ներկայացնէ, որ, իր կարգին, Ժառանգաւորաց Վարժարանի աշակերտ արձանագրել կուտայ։ Արդէն իբրեւ գեւատի պատանեակ Գարբիէլ, — այդ էր իր աւագանի անունը, — Սեցի Աջապահեան Յարութիւն եպիսկոպոսէն Ռարբերգի Ս. Յակովբ եկեղեցւոյն մէջ Դպրութեան չորս աստիճանները ընդունած էր, և հիմա Ժառանգաւորաց Վարժարանի ընթացքին ուշիմութեամբ հետեւելով, Գարբիէլն Մուրադեանի (Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս), Արապկերցի Կարապետ Պատուելիի (Մամբրէ եպիսկոպոս) և բազմախումու Սաւալանեան վարժապետի դաստիարակութեան ներքոյ, և միանգամայն Մ. Յակովբայ տաճարի պաշտամանց մէջ վարժուելով իբրեւ փոխասաց դպիր եւ երգեցող, երեք տարի վերջ աւագ սարկաւագ կը ձեռ-

նագրուի, եւ պատրիարքի կարգադրութեամբ մի քանի ուրիշ սարկաւագներ հետ միասին Կ. Պոլիս կը զրկուի՝ մանկավարժական գիտելիքաց մէջ աւելի լաւ հմտանալու։ Եպիսկոպոսի Ժառանգաւորաց Վարժարանի ուսուցչութեան և տեսչութեան զեկը ձեռք առնելու համար, Երկու տարի վերջ տիրացու Գարբիէլ իր ընկերներ հետ կը վերագտնայ Երուսաղէմ, և անմիջապէս Ժառ. Վարժարանի ուսուցչական խումբին մէջ կը մտնէ և եռանդով կը դասախօսէ. միեւնոյն ժամանակ Սիոն ամաթիւրիէին կ'աշխատակցի, և քիչ վերջն ալ այդ պարբերականի խմբագրութիւնը կը ստանձնէ։ Այսքան զբաղմանց մէջ դեռ Ժամանակ կը ձարէ իր ստացած կրթութեան և փորձառութեան հիման վրայ դասադիրքի կը պատրաստէ, Սեպարիադարութիւն, Տիեզերագիտութիւն, Ս. Գրոց Պատմութիւն ևն. որոնք Ս. Յակովբեանց տպարանէն հրատարակուած են։ Այս բոլոր եկեղեցական, ուսուցչական և գրական աշխատութիւններէ զատ միաբանութեան ընդհանրոր եւ Տնօրէն Ժողովներու ատենադպրութեան պաշտօնն եւ կը վարէ։ 1877 թ. արեգայ կը ձեռնադրուի Եսայի պատրիարքի ձեռամբ, Սահակ անուանափոխութեամբ. իսկ յաջորդ տարին վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութիւն կը ստանայ։ 1881 թ. Միաբանութեան կողմէ իբրեւ նուիրակ Ռուսաստան կը զրկուի, և չորս տարի Ռուսահայ Ժողովուրդի ամէն դասակարգի հետ շփում եւ յարաբերութիւն կ'ունենայ, եւ Ռուսահայաստանը մօտէն ճանչնալու պատեհութիւնը կը վայելէ։ Կ'ըսուի թէ այդ նուիրակութեան միջոցին 5-6 հարիւր չափ գիւղեր այցելած է, ամենուրեք քարոզելով, միխթարելով, համոզելով. և այսպէս հետզհետէ ինչ որ ծածուկ էր իր հոգւոյն մէջ, իր կենցաղավարութեանն ու գործունէութեամբ ի յայտ կը բերէ։ Երիտասարդ Սահակ վարդապետը տակաւին իր նուիրակութեան ճանապարհորդութեան մէջ էր երբ Երուսաղէմէն հեռագիր ստացաւ թէ Միաբանական Ժողովը զինքն Ս. Յակովբայ Աթոռի Լուսարարապետութեան պատաս-

(*) Քաղաք՝ Խոտուած 12 Նոյեմբերին, Ս. Յակովբայ Տաճարին մէջ հանգուցեալ Տ. Սահակ կաթողիկոսի հոգեմանգոսեան առթիւ։

խանառու պաշտօնին ընտրած է, և միանգամայն նորընտիր Մակար կաթողիկոսին կը յանձնարարեն, որ 1885ին զայն Մամբրէ վարդապետի հետ միասին եպիսկոպոսական աստիճանին կը բարձրացնէ։ Զոյգ նորու պըսակ եպիսկոպոսունք կը ճանապարհուն գէպի Պաղեստին. ճանապարհին կը տեւի կանան որ Սոսյի պատրիարք վախճառած է. և մի ժամանակ Սթոր թափուր մնաց, որի միջոցին Սահակ եպիսկոպոս իրեն լուսարարպետ, գրիթէ պատրիարքական յուր գործերը կատարելու և կառավարելու ստիպուած էր։ 1888ին Կ. Պոլսոյ պատրիարքութեան հրաժարեալ Յարութիւն Արքեպիսկոպոս Արուստակէմի պատրիարք ընտրուեցաւ, և յաջորդ տարին զնաց իր պաշտօնի գլուխը Երուսաղէմ։ Այս թուականին էր որ այս սողերը գրողը նախորդ տարի։ Գերմանիոյ մէջ աստուածաբանական ընթացք աւարտած լինելով՝ և Ս. Յակոբայ միաբանութեան կողմէ հրաւիրուած լինելով եկաւ Երուսաղէմ՝ Ժառանգաւորաց Վարժարանի Աստուածաբանութեան ուսուցչի պաշտօնով, և աւելի քան չորս տարի Սահակ Սրբազանին գործակից լինելու հաճոյքը և շնորհքը վայելեց, և միանգամայն ականատես եղաւ անոր մեղուական աշխատութեան թէ վարժարանի մէջ և թէ վանական բոլոր գործերի մէջ։ Լուսաբարպէս բառը այդ պաշտօնին միայն մի փոքրիկ մասն կը նշէ։ Հանգուցեալ Սահակ Սրբազանը պատրիարքի ալ բազուկն էր, և նորա հետ միշտ խորհրդակցելով վանքի տնտեսական և ընդհանուր բարեկարգութեան հսկիչն էր, վարիչ-անօրէնն էր, եկեղեցական օրագրան պաշտամանց կանոնաւոր և վայելուչ կատարման վերին աստիճան նախանձախնդիր՝ ուղղութիւն տուող աւանդապահն էր, Սրբազան Տեղեաց Աղգային իրաւանց արթուն պաշտպան, տպարան, մատենադարան, Ժառանգաւորաց Վարժարան, այն ժամանակ տարեկան մէկ հազարէն մինչև երկու հազար բարեպաշտ ուստաւորներին հոգատարութիւն, և հոգեւոր սփոփանք ու մխիթարութեան ունեցած բազմաթիւ յարաբերութիւններ, աւանդատան և եկեղեցւոյ գանձարանի անգնահատելի իրաց հաւատարմ պահպանութիւն և դասաւորում, և այս

բոլորի վրայ գրական լուրջ աշխատութիւն, երկու երեք հազարի չափ գրչագիրներին ուսումնասիրութիւն և ցուցակագրութիւն, տպագրելի գրքերի օրագրութիւն, տարեկան օրացոյցի սրատրատութիւն, ի մի բան՝ ամենայնոյն աւելածուի մինչև արքեպիսկոպոսի խնդիրներին լուծումն լուսարարական տնտեսի կը պատկանէր և անկէ կը սպասուէր։ Այս բոլոր գործերի մէջ պարտաճանաչութեան եւ պատասխանատուութեան խորին զգացումն, անսարակոյս նաեւ գործի սէր և գործիլու հաճոյքը և վեհ նպատակն ու հաւատը՝ հանգուցեալ Սահակ կաթողիկոսի լուսարարականութեան պաշտօնի ամենամեծ և ամենազօր մղիչ խթանն եղած էին։

Ժառ. Վարժարանի վրայ տեսուչներէն և ուսուցիչներէն աւելի ինքն էր որ կը հսկէր ու կը գուրգուրար։ Մինչև Յոսայի պատրիարքի ժամանակ Ժառ. Վարժարանը մի նշանակելի արդիւնք տուած չէր, և յետուին չափ վարդապետներին մէջ հազիւ երեքը Ժառ. Վարժարանէն ելած էին նոյն խել Յոսայի պատրիարքի օրով։ Բոլոր միւս միաբանները փոքրաւորութենէ բարձրացած անձեր էին, որոնց իւրաքանչիւրը իր եպիսկոպոս կամ վարդապետ մեծաւորէն ստրկած էր ինչ որ գիտէր։ Իսկ այն տառնուսայ միաբանները ընդհանրապէս խորթ աչքով էր նայէին Ժառանգաւոր աշակերտներին վրայ. անոնց դաստիարակութիւնը, ապրելակերպը և մինչև անգամ զբօսանքը յաճախ անմիտ քննադատութեան առարկայ կը լինէին։ Սահակ Սրբազանի և Յարութիւն պատրիարքի պաշտպանութեան ու հովանաւորութեան շնորհիւ էր որ աշակերտք կանոնաւոր ընթացքի կը հետեւէին։ Այդ շրջանին կանուխէն զգացուեցաւ որ թուրքաբօլէն փոխասացութիւնն ու երգեցողութիւնը, և մեքենաբար պաշտօնական տարութիւնը բաւական չէին եկեղեցականներին հոգեւոր պատրաստութեան համար։ Արդարեւ, լեզուական ինչպէս և բոլոր արտաքին գիտութիւնները կարեւոր են եկեղեցականութեան պատրաստողներին ընդհանուր զարգացման համար։ Բայց առանց հոգեւոր և աստուածամեքէ կեանքի վարժուելու, սոսկ այդ գիտութիւնները եկեղեցականի վայելուչ պատրաստութեան չեն նպաստել, ինչպէս որ մեր մեծագոյն կղերանոցները, որոնց պահպանութեան համար

Ազգը միլիոններ մոխած է, հոգեւոր կըրթութեան պակասի հետեւեալ շատ անշնայն արդիւնք տուած են Սկիզդիցւոյ պաշտօնէից նկատմամբ։ Այս պարագան ալքի յառաջ ունենալով էր որ Վենիսայոյ Հ. Սրբէն Բագրատունւոյ երթագրութեամբ հրատարակեալ Աստուածաշուրջէն 30 օրինակ զնուեցաւ (այն ատեն տակաւին Պօյսահան գրաբար Աստուածաշուրջը հրատարակուած էր) և իւրաքանչիւր աշակերտի տրամագրուեցաւ, որպէս զի գրականապէս ուսումնասիրելէ զատ՝ պատեհութիւն և զիւրութիւն ունենայ առանձին և յաճախ կարգալու և ընտելանալու Ս. Գրոց հետ. մէկ խօսքով՝ նականպետների, մարգարէների, աւետարանիչների եւ առաքեալների հետ ապրել, և իր հոգին աստուածային ներշնչմամբ սնուցանել՝ այն անասան հաւատքով որ սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն է, և եթէ եկեղեցականը իր ժողովուրդին հոգեւոր առաջնորդ պիտի ըլլայ, պէտք է որ նախ ինքը այդ հոգեւոր կեանքը իր մէջ ունենայ և զգայ։ Այս ուղղութեամբ ապրած և գործած են մեր երանաշնորհ հայրապետները, որոնց՝ մեզ աւանդած աղօթքներն ու շարականները և բովանդակ ժամապատկան սասցուածները լեցուն են Ս. Գրոց վկայութիւններով ու ներշնչումներով։

Գարձեալ մի ուրիշ յարակից խնդիր։ 1892ի 12 ընթացաւարտները պէտք էր զըզրոցէն հեռանալին, որպէս զի կարելի լինէր զատանները փոխել և նոր աշակերտներ ընդունել, քանի որ Ժառ. Վարժարանը այն ատեն միայն չորս դասարան ունէր։ Սակայն յարմար չտեսնուեցաւ այդ շրջանաւարտ տղայքը ուղղակի Միաբանութեան հետ խառնել։ Պատարարքի և Սահակ Սըրբազանի կարգադրութեամբ վանքի մի ասանաւոր յարկաբաժինը պատրաստուեցաւ և մեկուսացաւ իբրեւ առանձին բնակարան և ուսումնարան ընթացաւարտների, որոնց ուսումը պիտի շարունակուէր մէկ տարի ևս եւ միանշամայն Ս. Յակոբայ տաճարի եւ Ս. Տեղեաց մէջ իրենց պարտաւարութիւնները կատարելէ վերջ, առանձին դասերով իրենց գիտութեան պակասը պիտի լցուցանէին։ Իսկապէս այս եղաւ սկիզբն, ինչ որ այժմ աւելի զարգացած ու կանոնաւորուած է, Ընծայարանի դրութեան։

Մեր երջանկայիշատակ Սահակ Հայրապետի կեանքի հետ սերտ աւնշութիւն ունեցող մի ուրիշ ծածուկ ու զաղտնի տնօրէնութիւն կար որ պէտք էր յայտնուէր. այդ ալ անոր ընտրութիւնն էր ի կաթողիկոսութիւն Տանն Կիլիկիոյ, Հայաստանեայց եկեղեցւոյ տիտուր գրուագնիրից մին է Ամենայն Հայոց Կաթողիկոսի աստանդական լինելը, Հայրապետական Աթոռի յաճախակի տեղափոխուելն ըստ պահանջման ժամանակի և պարագայից. Երեւնի Դուին, Երեւնի Անի, Աղթամար, Հոռուկայ, Սիս և այլուր։ Միայն 1441ին վերջնականապէս փոխադրուեցաւ Էջմիածին, որ մինչև ցայսօր մեր Եկեղեցւոյ կեդրոն կը համարուի։ Սակայն այդ թուականէն մէկ ու կէս դար յառաջ Հայրապետական Աթոռը պաշտօնապէս փոխադրուէր էր Սիս, և Կիլիկիոյ ժողովուրդն ու Սոյլ Միաբանութիւնը վարժուած էին Ամենայն Հայոց Կաթողիկոսը իրենց մէջ ունենալ, և միայն Ս. Լուսաւորչի աջի անհետանալը Սիսէն, և կասկածելի պարագայից ներքոյ Էջմիածնում յայտնուելն ու Աթոռի անակնկալ փոխադրութիւնը բնականաբար չէր կրնար հաճել լինել Սսեցիներին, որոնք անվրդով շարունակեցին կաթողիկոսական Աթոռը պահել Սիսի մէջ, և մինչև վերջին զԺառի տեղահանութիւնը ամբողջ Կիլիկիոյ սահմանների ստուար Հայութիւնը Սիսի կաթողիկոսութեան ենթակայ էր։ Երեւնի ու մանց անխռն ընթացքի հետեւածք Սիսի և Էջմիածնի միջև մի տեսակ մրցակցութիւն տեղի ունեցած է. այլ մեր վերջին 4-5 կաթողիկոսները աւելի իմաստուն զըտնուէր են, եւ իրենց գրութիւններով ու կոնդակներով սիրալիւր և եղբայրական յարաբերութեան մշակած են Կիլիկիոյ կաթողիկոսի հետ։ Իսկ վերջին 20-30 տարիների քաղաքական իրադարձութիւնք, մանաւանդ Էջմիածնի այժմեան տնտեսող վիճակը, նոյնիսկ ամենէն յոռետեսներին համոզեցին որ մեր Ազգային Եկեղեցին Կիլիկիոյ կաթողիկոսութեան պէտք ունի իբրեւ պահեստի Հայրապետական Աթոռ։

1902ին Սահակ Սրբազան Կիլիկիոյ ընդհանուր եկեղեցական ժողովի միաձայն քուէով Կաթողիկոս ընտրուեցաւ։ Արդարեւ, հանգուցեալը սիրով յանձն առաւ այդ զըժուարին պաշտօնը, և իր սովորական եռան-

գողը գործի սկսաւ։ Սոյո գրեթէ աւերակ
Հայրապետանցը նորոգեց, և կը յուսար
ինչ որ Նրուսաղէմ ըրած էր նոյնը ևս Կի-
լիկիոյ մէջ ընել։ Այլ աւաղ, ի՛նչ յուսա-
խաբուածիւն։ աղէտ աղէտի վրայ հանգու-
ցեալ Հայրապետի կեանքը դառնացուցին.
սոսկալի հալածանք, կոտորած, չլսուած
խժոժութիւններ, սով ու արածութիւն, և
վերջն ալ ամբողջական տեղահանութիւն։
Այս եղած է Կիլիկիոյ մէջ Սահակ Կաթո-
ղիկոսի պաշտօնավարութեան պատմութիւ-
նը։ Իր ժողովրդի պէս ինքն ևս եղաւ աս-
տանդական, չքաւոր և անօգնական։ Այս
դառնաղէտ չարիքների ցաւովը սովորու-
թիւն ըրած էր իր նամակների և կոնդակ-
ների ներքև ստորագրել Սահակ Բ. Աւե-
րակաց Կաթողիկոսոյ։

Վերջին տարիներ աստուածային նա-
խախնամական, յոյս ներշնչող, քաջալերիչ
ծածուկը յայտնուեցաւ, երբ իրեւ տրիտուր
իր անբաւ կորուստներուն՝ Անթիլիասի ըն-
դարձակ որբանոցին տրեցաւ և զայն իր
Աթոռանիստ վանքի վերածեց, Ս. Լուսա-
ւորչի անուամբ շքեղ ու հոյակապ տաճարի
չինութեան ձեռնարկեց, որ այժմ աւար-
տելու մօտ է, արգիական բոլոր յարմա-
րութիւններով իր վիճակի համար եկեղե-
ցականներ պատրաստելու դպրոցական շէնք
կառուցեց։ Իր շուրջը ունեցաւ ողբացեալ
Քարգէն Աթոռակցի, Պետրոս Արքեպիսկո-
պոսի և միւս բարձրաստիճան եկեղեցա-
կանների կարող գործակցութիւնը։ Անթի-
լիասի Միաբանութիւնը այսօր կը բաղկա-
նայ հինգ արքեպիսկոպոսներէ, վեց վար-
դապետներէ, և անցեալ շրջանին 20 ժա-
ռանգաւոր աշակերտներէ, որոնց թիւը 30ի
բարձրացնելու մտադիր էր։ Ի միջի այլոց՝
իր նորաշէն վանքին մէջ տպարան հաստա-

տած է և չարուհակաբար կրօնական ու բա-
րոյալից գիրքեր և տետրակներ կը հրատա-
րակուին։ Հասկ անունով մի ամսաթերթի
հաստատած է իր ցրուած ժողովուրդը ի մի
կապելու համար, և մեր Ս. Եկեղեցւոյ մը-
խիթարութիւնը հեռաւորներին ընձեռնու-
համար։ Կարելի է մեր մէջ իբրև նորու-
թիւն համարել անոր հաստատած Կիրակ-
նօրեայ դպրոցները, որ 22 վարդերի մէջ
հայ մանուկներին իրենց կրօնի սկզբունք-
ները կ'աւանդուին ամէն Կիրակի։

Կը սերծաւ յուսաւ որ երբ Կիլիկիոյ ձե-
րունազարգ Հայրապետը իր նորակերտ Վե-
հարանին մէջ ամսոյս Տին իր աշքերը պիտի
փակէր, յիշեց Ս. Պօղոսի առ Տիմոթէոս
գրած այն զեղեցիկ խօսքերը և գուցէ իր
արկածալից կեանքին յարմարցուց, թէ՛
«Զբարւո՞ք պատերազմն պատերազմեցայ,
զընթացն կատարեցի, զհաւատսն պահե-
ցի։ Այսուհետեւ կայ մնայ ինձ արդարու-
թեան պսակն, զոր հատուցէ ինձ Տէր յա-
ւուր այնմիկ արդարն դատաւոր» եւ մենք
այսօր կ'ազօթենք որ մարդասէրն Աստուած
Ս. Լուսաւորչի և նորա երանաշնորհ յա-
ջորդների բարեխօսութեամբ՝ հանգուցեալ
Սահակ Կաթողիկոսի խաչակրութեան փո-
խան երկնային սուրբ պսակով վարձահա-
տոյց լինի, անոր մարդկօրէն թիւրութեանցն
ներող և քաւիչ լինի։ Ս. Հոգւովն մըխի-
թարէ Անթիլիասի Միաբանութիւնը և Կի-
լիկեցի հօտն և զմեզ ամենեւին. և փու-
թապէս յարուցանէ արժանաւոր ժառանգ
եւ յաջորդ գահակալ Կաթողիկոսութեան
Տանն Կիլիկիոյ, ի փառս Ամենակալին և
ի պարծանս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ.
ամէն։

ԹԵՂՈՂՈՐՈՍ Ծ. ՎՐԴ. ԻՍԱՀԱԿԵԱՆ



ԿՐՕՆԱԿԱՆ

ԹԻԻԵՐԸ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԷՋ

Ա. ՏԱՍԱՐԳԱԿԱՆ ԹԵ՛ ԵՐԿՈՏՑԱՆՆԱՆ
ԳՐՈՒԹԻՒՆ.

Եզրկատարի տասնորդական դրութիւնը կը գործածէին, որ իրեն նիւ ունէր երկու ձեռքերու տարւ մատները, ու այս դրութիւնը ետքէն անցաւ Յոյներու եւ Հռոմայեցիներուն:

Գաղղեացիք, տարւան 12 ամիսներու ազգութեամբ, տասնորդական դրութեան նաւ հաստատեցին նաեւ երկուստանեան դրութիւնը: 60 թիւ, 12 ին յիւլ (մեզիկ մատներուն թիւը) բազմատասիկը, ունէր իր բազմապատիկներն ու ըստորաբաժանումները: Անոնք միևնոյն ժամանակ կը հաշուէին 500, 1000, 10000, 100000, 1000000:

Գաղղեացիներու այս սովորութիւնը անցաւ նաեւ Եւրոպացիներուն:

Այսպէ՛ս կը տեսնենք որ Աբրահամ, տասնորդական դրութեան համաձայն, կը խնդրէր Աստուծոյ խնայել Սողոմոն՝ եթէ նա գործուէին 50 արգարներ, ու այս թիւերը նոյն դրութեամբ կը նշուակեցին, հետզհետէ ինչպիսիք 45, 40, 30, 20, 10 (Ենիւլ. ԺԸ. 26-32): Նոյնպիսի տասնորդական դրութեամբ է որ Մովսէս անապատին մէջ կը խոստանար Ժողովուրդին՝ 10 տն կրնայ մին ուսեւ ու 1, ու 2, 3, ու 5, ու 10, այլ 30 օր (Թիւք ԺԸ. 19): Եւրոպացիք բազանք աւելի կարեւորութիւն տուան այսին երկուստանեան դրութեան, շատ անգամ գործածելով 12 եւ 60 թիւերը ու աւելոնց բազմապատիկները կամ ստորաբաժանումները: Սերմանացանք աւազակն մէջ ցորենի բերքը թէն 100 է, բայց թ՛ նաեւ 60 եւ 30 (Մատթ. ԺԿ. 8, Մարկ. Դ. 8): Որքան որ տասնորդական դրութեամբ կը ճշգրտէին երկայնութեան չափերը, բայց եւ այնպէ՛ս երկու դրութիւններն ալ կը գործածուէին տարողութեան չափերուն համար:

Հրեաները լին թաւրի եղած ըլլալ մեծ հայաւազակներն: Անոնք արդեօք գիտէին չորսգիծին ու արամագիծին հարկաւ համեմատութիւնը: Կասկածելի է, իբրեւս եւ Աստուածաշունչին մէջ՝ Թէ Գիլիմէ Սովից արամագիծն է 10 հանգուս ու չորսգիծը՝ 30 հանգուս, մինչդեռ այդ համեմատութեամբ չորսգիծը պէտք էր ըլլար 31 ու կէս հանգուս: (Եթէ չորսգիծը 30 հանգուս ըլլար՝ արամագիծը պէտք էր ըլլար 9 ու կէս հանգուս): Բայց հասկնալի է որ Ս. Գիրքը այստեղ մեքանոսը հայելու մը կը ներկայացնէ:

Բ. ԻՆՁՁՈՒՍ ԿԸ ԳԻԼԻՄ ԹԻԻԵՐԸ.

Ֆաշիզմին սիրելի բանաձեւն է, «Ամէն ինչ Պետութեան մէջ, ոչինչ Պետութեան դէմ. ոչ մէկ բան Պետութենէ դուրս»: Այսպիսի պետութենապաշտ ըմբռնում մը՝ Պետութեան մասին, աւելի մեծ վստահութիւն կը ներշնչէ զանգոռածներուն, քան հաւասարապաշտ ռամկավարական ու խորհրդարանական վարչաձեւը, որ ԺԹ. դարուն տիրող պետական ըմբռնումը եղաւ, և որ չնչաւ կը գնէր ոչ այնքան ռալիի, որքան քանակի վրայ: Ֆաշիզմը կը քննադատէ Ռամկավարութիւնը և թիւիմ տեղ կը դնէ անհատականութիւնը: Պետութիւնը բարձրագոյն անհատականութիւնն է որ ազգ մը կարելի կը դարձնէ. միայն Պետութիւնը կրնայ ազգ մը ստեղծել, գիտակից ինքզինքին, իր բարոյական միութեան, իր ապրող կամքին և ոգեկան արժեքներուն. հետեւաբար Պետութիւնը՝ ներքին ձեւն ու կանոնն է (forme, և norme) ազգին, որ անոր կը պարտադրէ իր կամքը, բարոյականը և մտածումը:

Ֆաշիզմը կը յաւակնի այս ձեռք զարգացնել զօրաւոր պետական գիտակցութիւն

մը և յստակ ուժի կամք մը, ըլլալով միևնոյն ատեն, մշակողը ոգեկան արժեքներու: Ահա այս ձև պետութեան մը ստեղծումն է՝ նպատակը Ֆաշիստ Յեղափոխութեան: Բայց պէտք է որ ան ունենայ ընկերային պարունակութիւն. «որովհետեւ Յեղափոխութիւն մը իրապէս մեծ ըլլայ և տեւական ազդեցութիւն մը ձգէ Ժողովուրդներու վրայ պատմութեան մէջ, պէտք է որ այդ Յեղափոխութիւնը ընկերային ըլլայ» կ'ըսէր Մուսոլինի 1933ին. և Ֆաշիզմը իտալիոյ մէջ անգամահատեց Ընկերավարութիւնը, ճանչնալով հանդերձ անոր հիմնական սկզբունքները՝ ընկերային արդարութեան և հաւասարութեան, և զգուշացաւ քաղքենի դրամատիքութենէն, որուն պէտք չունի ան՝ զաւրիք ընկերային յեղափոխութեան օրերուն: Ընկերային այսնոր յեղափոխութեան՝ Ֆաշիզմի՝ վարդապետական կէտերը փոխ չեն առնուած Մարքսիզմի ընկերավարական վարդապետութեան զինարաններէն. անոնք սեւս յարաբերութիւն ունին Հոգով. Եկեղեցւոյ ընկերային ուղղութեամբ: Մասնաւորաբար արհեստագիտական պետութեան վարդապետութիւնը, ինչպէս հրատարակուած է Լեոն ԺԹ. Պապի կոնգրէսի մէջ: Ֆաշիզմի այս արհեստագիտականութիւնը (corporatisme) կը դատապարտէ՝ իբրեւ սխալ եւ փնտաւար ուսուցումներ՝ մարքսիստ հանգանակին ամենէն սիրելի կարգ մը ուսուցումները:

Ֆաշիզմը կը մերժէ նաեւ Պոլշեւիզմի պատմական նիւթապաշտութիւնը, որ կը փոքրցնէ մարդուն կարեւորութիւնը և մշակոյթը զուտ տնտեսական իրողութիւններէ ելուողաւ կ'ընդունի, ստորագրաւորով ոգին՝ նիւթին: Ֆաշիզմը չի հաւատար տնտեսական ճակատագրի երկաթէ օրէնքին. մեծ և լայն տեղ կը թողու ան անհատի կամքին՝ որ իր ճակատագրին և հերոսութեան արուեստագէտն է, որոնցմով կրնայ ան փոխել ամբողջ երկրի մը ճակատագիրը:

ԱՐԹՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

(Շարունակելի)



ԱՆՏԻՊ Է.ՋԵՐ

ԳՈՒՍԱՆԵՐԳՈՒԹԻՒՆ

(ԵԿԵՂԵՑԻՒ ՄԸ ՀՐԴԵԶԷՆ ԱԶԱՏՄԱՆ ԱՌԻՅՈՎ ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՈՐԷՆ)

Նոր գերապանծ փառօք բերկրեալ ցնծա հարսն անեղին.
Ահա նորոգ զովեստ յարմար չիքէն սքանչիցն նորածին:

Զի թէ արփին խնթիւ դիտեաց՝ զգննու միթէ զսեաւ տխրալին,
Ահա անդրէն ի դարձ ելեալ ընդ առաջեալ քո եղբօր որդին:

ԱՂԵՐՍ ՀԱՐՍԻՆ

Թառնելըն քո առ ի խնդիր ի հրապարակս ընդ փողոցին
Ահա նա իմ եղբօր որդին միթէ տեսէ՞ք արք հանդէսին:

Եղբօր որդին իմ անց զինեւ եւ ոգի իմ ել ընդ բանին.
Ահա նա ալք իմ լի ցօղով, միթէ տեսէ՞ք զիմ բաղձալին:

Ո՞ւր ընթացա՛ւ եւ ո՞ւր գտայց եւ ո՞ւր դիտէ զլոյս արեւին,
Ահա ընթացս իմ տոյտրիմ միթէ տեսի՞ք զիմ անծկալին:

Ալք նորա է իբր զաղաւնիս. լուացեալ կաթամբ ջուրց բազմալի.
Եւ ձեռք նորա ոսկի մաքրեալ լցեալ ակամբ շափիւղալի:

Շրթունք նորա շուշանք բուրեն, ծնօտք նորա տաշտ կնդրուկի.
Կոկորդ նորա լի քաղցրութեամբ, ամենեւիմք յոյժ ցանկալի:

Տեսիլ նորա իբրեւ զընտիր եղենափայտ Լիբանանի.
Ահա այն է եղբօր որդին այն մերձաւոր ՚ւ իմ սիրելի:

Օն եւ օն ձեզ իմ օրիորդք, եթէ տեսէք ազդեցէ՞ք ինձ,
Մինչեւ կալայց եւ ոչ թողից. համբուրեցից զիմ ցանկալի:

Ի կողոզեղ առ ի հարցմունս՝ որոնել քո արտասուագին
Ահա նա գայ լերանց բարձանց սաստիկ սիրով ի քեզ մերձին:

ՓԵՍԱՅՆ ԱՍԷ

Բաց ինձ, ասէ, քոյր իմ զդուրս քո, գեղեցիկ իմ ամենեւին.
Ահա նա զլուխ իմ լի ցօղով, վարսք իմ շաղից գիշերային:

Զայնեալ ի քեզ եղբօր որդին արի եկ դու մերձաւոր իմ
Ահա ծմնուն անծրեւք անցին, ծաղկունք յերկրի գունագեղին:

Որթք մեր ծաղկեալ գհոտն բուրեն եւ լուր եղեւ ծայն տատրակին
Արի եկ դու աղանիդ իմ, կատարեալ իմ, գեղեցիկ իմ:

Մուծեալ զքեզ ի տուն զինուոյ կարգեն զսէր քո սիրելին.
Ահեակ նորա քոյին զգլխովդ եւ աջ նորա զքեւ պատին:

Այն իւղ թափեալ չքնաղ անուն քո մերձաւոր եղբօր որդին
Ահա նա ետ համբոյր ի քեզ, զի իղձ սրտիդ կատարեսցին:

Ողկոյզ ծաղկեալ եղբոր որդին բուրեալ նարդոսն ընդ ստաշխին.
Ահաւաղիկ կաս գեղեցիկ առ ի վայելս քո փեսային:

Ծանեար ըզքեզ անհաս գեղով չթողլով ըզհետ զարշապարին.
Ահա նա քեզ եւ դու նմա, զի հովուեսցէք ի շուշանին:

Գնացոր ըզհետ եղբորորդոյդ առ յուղղութիւն օրինակին.
Ահա եղբր զնա կնիք սրտո՞ղ եւ մատանի յաջոյ ձեռին:

Նաեւ ի քեզ յոյժ խանդակաթ խանդատեալ ի սէր քոյին
Ահա ընթացք գետոց եւ ջո ըջ սէրդ ի սիրոյն ոչ բաժանին:

Այ դու քանի գեղեցկանաս, այ դու քանի մեզ քաղցրանաս
Աէր փափկութեան քում յարմարի փեսայն անյագ սիրով կապի:

ՕՐԻՈՐԴՔՆ ԱՍԵՆ Ի ԲԵՐԱՆՈՅ ՀԱՐՍԻՆ

Արդ զինչ պատմես քո դստէյացն, այ թագունի գեղեցկային.
Թէ ահա նա իմ եղբոր որդին կարմիր սպիտակ ընտրել ընաւին:

Արի հիւսիս եւ եկ հարաւ շնչեա յայգիս զի ծաղկեսցին
Ահա նոր գայր մերձաւոր իմ, հանգիլ ի մէջ բուրաստանին:

Այ օրիորդս դստերք փառաց նուագեցէք ծայն ներբողին,
Ահա օր է ինձ հարմնութեան գտի արդ զոր սիրեաց անձն իմ:

Սիրելին իմ ի սենեակէ երգեսցուք սէր զանլռեւիլին.
Յորդորեցին ծայն քաղցր յարմար՝ ծագման սիրոյ յառաւօտին:

Երկու ստինք ուլս երկւորիս արածելով մէջ շուշանի,
Ահա ի լեառն զմռնենեաց եւ ի բլուրն կաս քրքումի:

Ջնոր առ հնով ետ ինձ մայր իմ, քեզ պահեցի եղբոր որդի.
Արդ ասա ինձ ով տայր ի քեզ դիտել զստինս ով տենչալի:

Ի ՓԵՍԱՑԷՆ ԱՌ ՀԱՐՄՆ ԴՐՈՒԱՍՏ ԵՐԳԵՆ

Փոխարինեալ դու զովեցար ի բերանոյ սուրբ փեսային
Ահա բազում են թագունիք, մի աղաներդ, մի սիրելին:

ՕՐԻՈՐԴՔՆ ԱՌ ՀԱՐՄՆ

Անուն եղաւ քեզ առաւօտ, եւ գեղեցիկ իբր զլուսին,
Ահա դու կաս զօրմանալի պայծառատիպ գեր քան զարփին:

Առեալ ածեր ի տուն մօր քո յըղեցելոյ մեծ սենկին,
Ահա նա շունչ ետուր ի մեզ հոգիազգեստ սուրբ համբուրին:

Որովայն քո շեղջ ցորենոյ շուշան ծաղկօք լըցեալ փակին.
Ահա ելեր յարմաւենին եւ ընկալար զվերնոյ նորին:

Գոյն ոսկեցեղ լիքանանի սաղարթախիտ բազմորակին,
Ահա նա վարդ քո կարմրերփեան նորոգ թփոյդ վառեալ զփայլին:

Այտ քո իբրեւ զնրոնասին թէպէտ դրժող վարսքդ երեւին.
Ահա՛ նո՞ր փառք քո ի ներքոյ ախորժակաւ դեղ հիւանդին:

Սափոր լցեալ հացիւն երկնից անմահութեան ճաշակողին
Ահա ըմպել տաս զգինին ազնիւ ի նռնենեաց սուրբ խորհրդին:

ԴՐԱՒՈՍԱԿԱՆ

ՍՄԻՏԱԿ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

(ՊԱՍՏՈՒԱԾՔՆԵՐ)

Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Յետ-պատերազմեան սերունդը, հայրենիքէն հեռու, չդատապարտուեցաւ գրական իր արդիւնաբերութեան մէջ դժբախտ ամուլութեան մը: Մասամբ մը զայն կը պարտի իր ժողովուրդի հոգեկան ստեղծագործութեան և մանաւանդ՝ իր նոր միջավայրերուն: Մեր նոր գրագէտները նոր ցաւեր է որ կը կերպաւորեն: Հայրենիքի տառապանքները չեն այլևս անոնք, այլ բնորոշոր տպաւորութիւնները հայածական ժողովուրդի մը ուրուն «Բիւրերը շարունակ արցունք լացին ճգմուած թշուառութեան ու բռնութեան կրունկներուն տակ»: Մեր ժողովուրդը առաւելապէս զգաց զանոց բոլոր և ահա ինչո՞ւ անոր գրագէտ զաւակները անկեղծութեամբ նուիրուած են դատի մը որ նոր դարուն զերբազայն հարցերէն է: Յաւիտենական անհաշտ պայքարը գործաւորին և գործատէրին, գրկուածին և հարուստին, տկարին և զօրաւորին: Հիմա մանաւանդ երբ զօրութիւնը կը կայանայ խրաժեհրուն մէջը ոսկիներու գէզերուն:

Զրկուածին և գործաւորին կարմիր ազգապէն է որ կը տիրապետէ մեր գրականութեան վրայ յաւելում եղած այս նոր գրքին մէջ: Սպիտակ Արդարութիւն որ դաւեր շարունակ մարդիկը բաժնեց երկու դասակարգերու որոնցմէ միշտ մէկը լծկանը եղաւ միւսներու կառքերուն, ինչպէս Անդրէասեան կը պատկերէ իր գրքին վերջին էջերուն:

Ամէն գիրք այսպէս կեդրոնական արեւադարձ մ'ունի, որմէ կ'առնէ ան, իր բոլոր մասերով, իր լոյսն ու ջերմութիւնը: «Սպիտակ Արդարութեան» մէջ ան պայքարն է զրկուածին և հարուստին, որ կը լուսաւորէ պատմուածքներն ամբողջ և իր փափանցիկ կը դարձնէ անոնց մէն մի բառը: Անդրէասեան խորապէս տիրացած է այդ գաղափարին և անկեղծ խնկողը անոր:

Ա. Անդրէասեան, պատերազմի դառնութիւններուն մէջ զանազանութեան և որբացած հոգի մը, միշտ ենթակայ զրկումի և չարաւաշտաւանքի, դիտած է լաւագոյնս բուրբ այն թշուառութիւնները զորո կեանքը պահած էր իրենպէսներուն: Հեռուէն տեսաւ ծագիլը նոր և կարմիր արշալոյսի մը և զգաց անոր մէջ երջանկութիւնը աշխատաւորներուն: Ինք տեսած էր անոնց ճգմուելը հարուստներու կրունկներուն տակ, ու ըզգացած պէտքը յիշափոխութեան և աշխատաւորական ճակատի յաղթանակին համար: Խորապէս հաւատացող անոր: Իր մեծ եղբայրը արդէն իր երեսուն տարիքին զոհ այդ գաղափարին, Սպանիական կոլաներուն:

Հոս մեր նպատակը չէ սակայն խօսիլ հեղինակին ընկերային տեսութեանց վրայ: Ըսինք այնքան որքան պէտք էր հասկընալու իր պատմութիւններուն ուսականութիւնը (dynamisme): Ամէն գիրք ի վերջոյ գրութիւն մըն է միակ գաղափարի մէջ ընտրել հաւաքուած ու զայն իմաստաւորող: Նախ ուղեցինք ահաւասիկ այդ պատմուածքներուն էութիւնը հասկնալ մըտնելէ առաջ զայն ձեւաւորող կերպերուն մէջ:

Իր գիրքը որքան գաղափարական աշխարհը հետաքրքրող, է նոյնքան գրական աշխարհին համար: Ի վերջոյ գրականութիւնը գրքի մը մէջ կեանքն է որ կը փնտռէ իր մտաւոր, հոգեբանական, գաղափարական եւ զգայնական երեւոյթներով: Այդ կեանքը կրնայ դիտուել զանազան հեղինակներու կողմէ զանազան հայելիներու ընդմէջէն: Ամէն մարդ դիտուել իր կերպը ունի զոր կարելի չէ պարտադրել ուրիշին, բայց կեանքը, առարկան այդ դիտողութեան, ընդհանուրին է: Կեանքը բոլորին, իսկ զայն ապրիւն կերպը և հասկացումը արդիւնք մարդուն հոգեբանական և զգայական կառուցումին: Յոռետես մը միշտ ցաւալի կողմերուն վրայ կը դիտէ կեանքը, մինչ ընկերաբան մը իր հայելիին մէջէն կը ցոլացնէ զայն: Իրականութեան համար կարեւոր է նախ տեսականները. ան կը փնտռէ կեանք, ըսուածքի անկեղծութիւն, իրերու լաւ և լայն ներթափանցում, կեանքը իր մարդերով և մտայնութիւններով:

«Սպիտակ Արդարութիւն»ը շարք մըն է կեանքէ քաղուած պատմուածքներու գեղեցիկ փունջի մը, մօտաւորապէս 260 էջերու մէջ պարականուած:

Ձայն կազմող ինը պատմուածքներու մէջ Անդրէասեան վերլուծումը կ'ընէ լլըքուած և դժբախտ մարդերու, որոնք այնքան իրական և կենդանի են կեանքին մէջ: Իրիծերը կը քաշէ ճիշդ: Կ'ընտրէ ամենէն տիպարայինները (typique) իր պատմուածքներուն համար, որոնցմով լաւագոյնս պիտի արտայայտէր իր մտասեւեռումը եղող գաղափարը: Ու այդ մարդոց համար կը գծէ

արդարութեան յառաջատուութիւն մը ուր անոնք կը ջախջախուին, կը դարձուին, կը լքուին փոխանակ հակառակը ըլլալու: Եւ կեանքին մէջ քիչ է թիւը սպիտակ արդարութեան գոնիւրուն. արգէն անոնք կը պարտուէր զաղափարները նոր յեղափոխութեան: Այս բոլորով Անդրէասեան կը դառնայ իրապաշտ. լաւ կը գիտէ ու կը քննէ իր շուրջն ու մարդերը. կը խորանայ մտայնութեանց մէջ ու իր պատմութեան քին յառաջընթացութեան մէջ կը կերպագրէ զանոնք ուղղապաշտ եւ ողջամիտ կերպով մը:

Իր «Անանունով մը օրերէն» պատմութեան մէջ կուտայ պատկերը հաշմանդամ զինուորի մը բոլորովին անկաշառեղի եղանակով մը: Մոռցուած՝ հայրենիքի համար պատերազմին մէջ կորսնցնելէ ետք ոտքը, ձեռքը եւ աչքերէն մին: Ու մարդիկ որոնք այնքան խանդավառ ցոյցներով ընդունած էին զիրենք պատերազմէ դարձին, տարիներու հոլովումով մոռցած էին զիրենք ու թափախուած կարասներուն մէջը իրենց հաճոյքներուն եւ ուկիներուն, դատարկապարտ մը կը նկատէին այլեւ զինք: Անոնք կը խաբէին զիրոյ վարքապետը, իր մօր սիրելի Քիտուը կնիծ բարեպաշտութեամբ մը, ու մանիկ մը շուռնէին անոր տէրէն. ինք տառապած էր, քայքայուած մըն էր մարդոց համար, եւ հիմա անոնք կը փախէին իր մարմնի կործանումէն...

Բոլոր իր պատմութեան ընկերով ուզած է սորվցնել, սրտառուէ իրականութեանց մէջէն եղբայրներութեան եւ հասարակութեան զոյգ զաղափարները մարդոց: Եւ Վատուհասուածը կ'արտայայտէ այդ ոգին մասնաւոր: Հոն տեսիլով մէջէն լսուող ձայն մը այդ գառն է որ կուտայ յոյն տղուն, սպաննել անձնասիրութեան որդի որ իբ ցեղին ողնասիւնը կը կրծէր ու ըլլալ այլասէր:

Բոլոր մեր նոր գրողներուն պէս ինք ալ կ'է բարձրանայ միջերգային զաղափարներուն եւ կեանքերուն սեւեռումին: Զանոնք կուտայ «տրամագիկ» ոճով մը, մէջէն ինքու նախադասութիւններու որոնք կը հետուիս շնչահատ եւ նոր անկախութիւններու հետաքրքիր լարուածութեամբ մը: Գիտէ չքեղազարդել իր գրութեան ընկերը նոր եւ նկարէն պատկերներով, իր գրութեան ընկերը ազատ են հասարակ տեղիքներու բարձրէն:

Մեր նոր գրագէտներէն ամենէն աւելի կը մօտենայ Շահան Շահնուրին: Անոր պէս յանդուգն եւ անոր չափ խորացող կեանքերուն մէջ, իր պատմելու ոճը շատ կը մօտենայ անոր ոճին: Նոյն թշուառութիւնները

տեսած՝ եւ նոյն տխրող կեանքը ապրող երկու գէմքեր երկուքն ալ: Կը մօտենան կեանքերու անոնց մէջէն քաշելու համար զարնուածներու, լքուածներու կարաւան մը: Անոնք յոռետեսներ են մարդկութեան նկատմամբ, իրենց կեանքը, հայուն կեանքը դարձուցած են զիրենք այդպէս: Իրենց գրականութիւնը իրբեւ այդ պիտի մնայ չըրջանի մը հայ հոգեբանութեան լաւագոյն աղ-դանշանները:

Անդրէասեանի լեզուն համակերելի է. ոճը ճախարակեալ ու պատկերալիք: Բառերը կ'ընտրէ ամենէն թափանցիկներէն եւ արտայայտչուններէն, եւ զանոնք կ'անցնէ իր սրբութի կրակէն: Իր ոճը երբեմն կը գառնայ հոռտորական. մեղքը՝ իր կուտակցական հակումներուն. բայց միշտ կը մնայ երաժշտական գնացքի մէջ: Կը կարգաս անձանքոյթ՝ ապրելով իրեն հետ, հերոսներուն հետ ողբերգութիւնը կեանքերուն:

Անդրէասեան սքանչելի երեակայութիւն մ'ունի: Իր գրագէտի լաւ տուրքերէն: Գիտէ իրականութեան հիմներուն վրայ կառուցանել նոր իրականութեան մը, կեանքի մը շէնքը: Իր «Պատուհասուածը» գերագոյն ապացոյցն է իր այդ առաքելութեան: Հոն աւանդութիւն մը կ'աճի իրականութեան տրեւանքներով, ըլլալու համար գիրքնական տեսիլք մը, նոր, կեանք մը:

Գրագէտ մըն է ինք: Լիմիւրիկան, որ տարինը առաջ թիթեւ գրականութիւն մը կուտար մեղի, այսօր սկսած է ազդեցութիւն լաւագոյն ապագայի մը համար: Ինք նատիպ գրագէտներ ունինք այլեւ հոն. Համաստեղն ու Նուրիկեանը, եւ հիմա Անդրէասեանը: Երբեք ալ տարինը ճաշակներու մարդ բայց երբեք ալ զիմապիծ ճշգրտ եւ զիրք որոշող:

Գրագէտի մը բոլոր յատկութիւնները ունի ինք. ինքնաապագութիւն, մասշին պաշար, զգացական թրթրուէն ջիւղ, զօրաւոր երեակայութիւն, կառուցուած ոճ, մարդ գիկն են իրերը ճանչնալու թափանցողութիւն, բուսածքի անկեղծութիւն, երաժշտական լեզու: Իր պատմութեան ընկերու մէջէն կը հսկին այդ բոլոր առաքելութիւնները եւ զինք կը դարձնեն մեր գրականութեան համար նոր եւ կարեւոր գէմք մը:

Իր գիրքը յաւելում մըն է մեր գրականութեան պատմութեան ընկերու ունի վրայ, եւ անոր հեղինակը կը գաստի մեր լաւ գրագէտներու զասին՝ իր ինքնատիպ եւ արդիական գրելու կերպով եւ յօրինումով:

ԲԱՐԳԷՆ ԱՐԶ. ԱՊՍԵՆԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՈՒՁԱԿ

1.— Նախագետ Քուչակի Դիւանին մէջ (էջ 14-15), Պ. Ա. Զօպանեան կը գրէ. «գալով Նահապետի Քուչակ մականունին, Պ. Յովհաննէս Թաղէոսեան, Լումայի 1902ի Յիթ թիւով հրատարակուած յօդուածի մը մէջ, սապէս կը մեկնէ զայն. «Քուչակ կամ Քուեակ (մի այլ ձեւագրի մէջ Քօչակ) մականունից, որ տաճկերէն ֆիւլիւկ բառն է, եզրակացնել կարելի է որ նա կարճա-հասակ մի մարդ է եղել և յետոյ նրա մականունը իբրեւ յատուկ անուն դրել են նաեւ նորա թոռին վրայ: Այս մեկնութիւնը, կը շարունակէ Պ. Զօպանեան, անճիշտ կը թուի ինծի, քուչակը հաւանականաբար ֆօչէկ բառին աղաւաղումն է, որ երգիչ, նուազածու, պարող կը նշանակէ»:

Անգարող ենք հասկնալու թէ ի՞նչ պատճառով Պ. Զօպանեանի սանճիշտ թուածն է չքուչակը բառին մասին Պ. Թաղէոսեանի մեկնութիւնը: Որովհետեւ Նահապետ Քուչակի ապրած ժամանակ հայերէն լեզուի մէջ թուրքերէն բառեր մուտ գտած չէին: Ուրովհետեւ Ն. Քուչակի «երկայնահասակ ըլլալուն մասին տեղեկութիւն մը գոյութիւն ունի: Որովհետեւ մարմնական յատկանիշ մը կամ թերութիւն մը իբր մականունն չէ՞ գործածուած: Այս բոլոր հարցումներուն պատասխանը ժխտական է: Պ. Զօպանեան ինք ալ թուրքերէն բառ մը կ'առաջարկէ քուչակը մեկնելու համար, և Նահապետ Քուչակի տաղերուն մէջ բազմաթիւ են թուրքերէն բառերը: Ն. Քուչակի ո՛չ թէ մարմնական կազմին մասին ո՛նէ տեղեկութիւն գոյութիւն չունի, այլ իր ապրած ժամանակն իսկ ստուգօրէն յայտնի չէ: Մարմնական յատկանիշ մը կամ թերութիւն մը իբրեւ մականուն գործածուած է ամէն տեղ, ինչպէս Ռոստոմ կոսակ, Մխիթար զօւ, Յովհաննէս կոլոս: Պ. Թաղէոսեանի մեկնութիւնը ո՛չ միայն անհաւանական չէր ըլլար, այլ բոլորովին հաւանական եթէ քուչակ բառը ֆիւլիւկին աղաւաղումը ըլլար: Պ. Ա. Զօպանեանի մեկնութիւնն է որ ընդհակառակն բոլորովին անհաւանական է: Քօչէկ կը նշանակէ երեսասարդ պարող, բայց չենք գիտեր թէ կը նշանակէ՞ «երգիչ, նուագածու»: Ենթադրելով որ նշա-

նակէ, Պ. Զօպանեանի մեկնութիւնը աւելի տրամաբանական չէր ըլլար քան Պ. Թաղէոսեանինը: Ամէն աշուղ կը նուագէ եւ կ'երգէ միեւնոյն ժամանակ, Ամէն աշուղ սնուցաւորութեւ ըլլալով, աշուղներուն հասարակաց յատկանիշ մը իբր մակդիր չի կրնար տրուած ըլլալ մասնաւոր աշուղի մը (Նահապետ կը կոչուի «աւուղ Նահապետ», տես Կ. Կոստանեանց, Նոր Ժողովածու, Ա. էջ 71, Ա., Զօպանեան, անդ, էջ 14): Սրկակացի մակդիր չի տրուիր ըսել մարդու, որովհետեւ ամէն մարդ բնականէն երկու աչք ունի: Բայց կոյր կամ միակացի կրնա մէկու մէջ անունին կցուիլ, որովհետեւ զայն կրնայ զանազանել ուրիշներէ: Գալով «եւրիտասարդ պարող» իմաստով ֆօչէկին, ուրկէ Պ. Զօպանեան կը կարծէ թէ աղաւաղումն է քուչակ, աշուղները չեն պաւրեր, որպէսզի այդպիսի անական մը կցուի իրենց անունին: Մնաց որ քուչակ աղաւաղումը չէ ֆօչէկին և ո՛չ ալ ֆիւլիւկին, և ենթադրութիւնամբ չէ որ բառ մը կը ստուգարանուի: Եթէ Պ. Թաղէոսեան և Պ. Զօպանեան պարսկերէն կամ արաբերէն բառարանի մը գիմէին տեսնելու համար թէ արգիծք քուչակ բառ մը գոյութիւն ունի՞ այդ լեզուներուն մէջ, հաւանական է որ ճիշտ մեկնէին բառին իմաստը:

2.— Քուչակ, որ գրուած է նաեւ քուչաֆ (տես Կ. Կոստանեանց, անդ, Բ., էջ 69). ինչ որ աւելի ճիշտ ձեւն է քան առաջինը, պահլաւերէնի և նոր պարսկերէնի մէջ կը նշանակէ փոքր (տես Գէորգ զպիր Յովհաննէս, բառարան պարսկերէն, ֆիւլիք բառը, ինչպէս նաեւ H. W. Bailey, Iranian Studies, II, BSOS, (*) VII /2, 69) և նոյնիմաստ է հայերէն կոսակ (կարճահասակ) բառին հետ (որ կ'արտասանուէր kotak), աւեստերէն kotaka, նոր պարսկերէն kodak և kotah բառերուն հետ, որ ամէնքն ալ նոյն բառախումբին կը պատկանին: Ներկայ պարսկերէնին մէջ բառը ստացած է նաեւ քուչիկ ձեւը. ասով՝ թուրքերէն ֆիւլիւք (տես H. W. Bailey, To Zamesh Namek II, BSOS, VI/3, 599, իսկ kotah մասին H. S. Nyberg, Hilobuch des Pehlevi, II, 208, stav բառի տակ, Horn, Grundriss der neupersischen Etymology, 194 (§ 871) kutah բառին տակ, և Wollaston, English-Persian Dictionary): Քուչակ, աւելի ճիշտ քուչաֆ, կը նշանակէ ուրեմն փոքր, կարճահասակ:

(*) BSOS = Bulletin of the School of Oriental Studies, London.

Ժե. դարու նշանաւոր ուղեգիր մը՝ Միշէլ Ֆեւեր, որ Թուրքիոյ մասին լաւագոյն գիրքերէն մին գրած է, եղիտիններուն մասին խօսելու առթիւ կ'ըսէ թէ փոխաբերաբար աշխարհը կամ փոքրաւոր կը կոչուին նորընծայ սեւագոյն կրօնաւորները, որ Ֆաիք ալ կը յորդորուին (Michel Fevère, Etat présent de la Turquie, Paris, 1675, էջ 381) և Théâtre de la Turquie, Paris, 1682, էջ 30)։ Սեւագոյններու մասին տես H. Lammeus, Etudes de Géographie et d'Ednographie orientale, MFOUSJB, (*) II, 378 և յաջորդ. Ֆաբրիկաներուն մասին՝ J. Ménant, les Yézidiz, էջ 63, որ իր տեղեկութիւնները քաղած է G. P. Badgerի The Nestorians and their Ritualsէն, I, էջ 132)։ Ձգիտնալով թէ փոխաբերաբար մէջ փոքրաւոր իմաստով գործածուած է, Նահապետի մականունին այդ իմաստը չենք կրնար տալ։

3. — Ըստ Անառնանի, կոտակ բառը մէկ անգամ միայն գործածուած է հայերէնի մէջ՝ «Քոստով կոտակ» (Փաստոս, Ա., 5)։ Նոյն հեղինակին համաձայն (Արմատական Բառարան, Գ., 1348), Սեբաստիոյ բարբառին մէջ կոտակ կ'արտասանուի գեղեկ և կը նշանակէ կլորիկ, կարճուկ մաքր։ Դարիկեան, Հողղարի առաջին թիւին մէջ կոտակը համեմատած է Թուրքերէն Բիւլիկ, հայերէն փոխակ, գաւառաբարբառ կեռ եկ, կուտակ բառերուն հետ (Անառնան, անդ)։ Փոխակ գործածական բառ մը եղած է ուրեմն հայ ժողովուրդին գէթ մէկ մասին լեզուին մէջ։

Անառնան փոխակ բառը կը յիշէ միայն կոտակ բառին տակ, բայց անոր ստուգաբանութիւնը չի տար։

Հայերէնի մէջ կոտակ գործածուած է երկրորդ անգամ մըն ալ, Քորենացիի վերագրուած Աբխազագրութեան մէջ (Գր. Սուքրեան, էջ 33) «Վիսական, զկոտակ» թուումին մէջ։ Մարքովարդ Վերանահր, էջ 120, Ծան. 2) «Վիսական, զկոտակ» կ'ուղղէ «Սիսական»-ի կոտակին, այսինքն «Բիւր Սիսականի, և իր ուղիւմը կ'ընդունի նաև Հիւսիսային Հին Հայոց Տեղւոյ անունները, էջ 228)։

Հ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄԵՆ. ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺԻ

ԵՐԵՎԱՆԻ ՍԱՆԱԿԱՆ

Նոյեմ. 8, ժամը 8:30ին հասաւ Ս. Սաանակ կաթ.ի վախճանումը գովուող հեռագիրը ստորագրուած Գեր. Ս. Պետրոս Արքեպիսկոպոսէ։ Ս. Պետրոսի Հայրը որոշեց անձամբ երթալ Անթիպիա՝ մասնակցելու յուղարկուած լուսնեան քի՛ ի դիմաց Ներսարկի Ս. Արքեպիսկոպոսի, ուր 35 արհիմներ վաստակած է հանգուցեալը իբրեւ կրթական, գրական եւ վարչական գործիչ, եւ 17 ամեայ լուսարարացեան, եւ քի՛ իր կողմէ երախտագիտական պարտք մը հատուցանելու՝ երկար տարիներ (1887–1903) անձնապէս վայելած ըլլալով անոր դաստիարակչական եւ հայրական խնամքը։

Նոյեմ. 9 եւ. Սրբազան Պետրոսի ընկերակցութեամբ Ս. Վանան Վրդ.ի կես օրին կը մեկնին Երուսաղէմէն եւ Երեկոյն ժամը 7ի մօտեր կը հասնին Անթիպիա։ Պետրոս չը հասած համբուն վրայ կ'ողջունուի Գեր. Ս. Խաղ Արքեպիսկոպոսէ եւ Դպրեվանքի երկու վարդապետներէ։ Անթիպիայի Վեհաճառի պառնակէ կ'ընդունուի Գաթ. Ընդն. Փոթ. Գեր. Ս. Պետրոս Արքեպիսկոպոսէ։ Ս. Ս. Նիքիէ, Արաւազի ու Նիքիէ Արքեպիսկոպոսներէ ու կարդիկոսարանի միաբանութեան եւ Դպրեվանքի ուսանողներէն, որոց ի գլուխ կը գտնուէին Վերսեսուլ Ս. Նուբայր Վրդ. եւ ուսուցչական խումբը։ Պետրոսի կ'աղայնորդուի Վեհաճառի դահլիճը, որուն կեդրոնը մահաբեմի մը վրայ գրուած էր երանգներով Հայրապետի մատմանը, ու հոն սրտաբախ հոգւոց մը կ'արտասանէ։

Նոյեմ. 11 եր. առտուն կանուխ հանգուցեալի դպալը կը տարուի Նոր Մարաշի Ս. Քառասուն Մանկանց եկեղեցին։ Դպր.ի կը հետեւէր ամբողջ եկեղեցական դասը։ Քիչ վերջ կը հասնին հաւե Սրբազան Պետրոսի եւ Պետրոս Արքեպիսկոպոսի, եւ կը մասնակցին առաւօտեան ժամերգութեան, կը պատարագէ Ս. Նիքիէ Արք. եւ օծումը կը կատարէ Սրբազան Պետրոսը։ Նոյն օրը երեւ

(*) MFOUSJB = Mélanges de la Faculté Orientale de l'Université Saint Joseph de Beyrouth.

կոյին դադարը կը փոխադրուի Պէյրուքի Ս. Նեան նորաեւն եկեղեցին:

Նոյեմ. 12 կիր. առտուն ժամը 10ին կը սկսի Ս. Պատարագը ի ներկայութեան Լիբանանի Հանրապետութեան Նախագահին, զինուորական ու քաղաքացիական բարձրաստիճանի պատեաններու, օտար Հոգեւոր պետերու կամ անոնց ներկայացուցիչներուն: Հանգիստաւարտութեան պատարագէն Ամեն. Սրբազան Պատրիարքը եւ Պատարագի տարւոյն, ճիշդ կէս օրին, յուրարկաւորութեան մեծաւոր քաթօրին կը նախապահէ մինչեւ Պուրնի հրապարակը: Այնքեղին Պետրոս Սրբազանի հետ իննամեարժով կը դառնայ Անթիպիս: Յուրարկաւորութեան քաթօր ժամը 4ին կը հասնի Անթիպիս: Այստեղ եւս Ս. Պատրիարքը կը նախապահէ գերեզմանի կարգին, եւ իր ձեռնով կը կնէ հոգեկոյս հանգուցեալի քաւը հողակոյսը:

Նոյեմ. 13 ք. Ամեն. Ս. Պատրիարքը կ'այցելի Պէյրուքի Կաթ. Փոխանորդ Տ. Նիլիէ Արեւիսիսկոյսին, եւ Հայ Կաթողիկոսին Տ. Գրիգոր Աղաջանեան Կ'սրովիկոս-պատրիարքին: Նոյն օրը կ'այցելի նաեւ Ս. Նեանի Քառասուն Մանկանց, Սահակեան եւ Հանրեցիներու ազգային վարժարանները ու Մանկապարտեզները եւ Համազգային ձեռնարանը, կը շնորհակալանքներ, կը բազայեք ու կ'օրհնէ ուսուցիչներն եւ ուսանողները:

Նոյեմ. 14 ք. կ'այցելի Անթիպիսի ժամ. վարժարան ու ներկայ կը գտնուի դասաւանդութեանց. նաեւ՝ վանքի Նախակրթարանը եւ Մանկապարտեզը: Նոյն օրը փոխայցելութեան կու գայ Տ. Գրիգոր Աղաջանեան կաթ. պատրիարքը ընկերակցութեամբ իր ընդհ. փոխանորդին՝ Գեորգի, Պետրոս Գեորգիեան գերապաշտօնին: Սրկու հանդիպումներուն ալ տեսակցութիւնները կ'ըլլան յոյժ սիրալիք եւ համակրական:

Նոյեմ. 15 ք. Ս. Պատրիարքը առտուն ժամը 8ին կը մեկնի Անթիպիսէն. իրեն կ'ուղեկցին մինչեւ Սուր (Տիւրոս) նորոնքի Կաթ. Տեղապահ Գեորգ. Տ. Պետրոս եւ Տ. Նազարէ. Տեղապահները եւ Տ. Ներսէս վարդ.: Ժամը կը հանգչի Յուպպի մեր վանքը, եւ երեկոյն ժամը 5ին կը հասնի Երուսաղէմ:

ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿ ՄԸ

Ամսոյ 23-ին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կը ստանայ Պաղեստինի Աւագ Քառուղարութենէն հետեւեալ նամակը

Government of Palestine

Chief Secretary's Office,
Jerusalem.

22nd November, 1939.

B/15/39

Your Beatitude,

I am directed by the High Commissioner to acquaint you that His Excellency has been requested by His Majesty's Principal Secretary of State for the Colonies to inform Your Beatitude that the message of gratitude and homage contained in Your Beatitude's reply to His Excellency's address on the occasion of the presentation to you of the High Berat has been conveyed to His Majesty the King, who has received it with great satisfaction.

I am,

Your Beatitude's
obedient servant,
J. S. MACPHERSON,
CHIEF SECRETARY.

His Beatitude

The Armenian Patriarch
of Jerusalem.

ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՆ

ՊԱՇՏՈՆԱՏՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՎ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԵԱՆ

B/15/39

22 Նոյեմբեր 1939

Ամենապատիւ Տէր,

Բարձր Գոմիտիի Կրօնանցով կը տեղեկացնեմ Ձեզի՝ թէ Նորին Վեհափառութեան պետական Գաղթային Գլխաւոր Քարտուղարը խնդրած է Նորին Վեհափառութեան տեղեկացնել Ձեր Ամենապատուութեան՝ թէ այն երախտագիտական եւ հպատակութեան արտայայտութիւնը, որ կը դրուուէր Նորին Վեհափառութեան ուղղորդին Ձեր Ամենապատուութեան պատասխանին մէջ, բարձրագոյն Հրովարտակի Ձեզի մատուցման առթիւ, ներկայացուած է Նորին Վեհափառութիւն Քառուղարին, որ ընդունած է զայն մեծ գոհունակութեամբ:

Ձեր Ամենապատուութեան հնազանդ ծառայ

Ժ. Ս. ՄԱՔՖԵՐՍՈՆ
Աւագ Քառուղար

Նորին Ամենապատուութիւն
Երուսաղէմի Հայոց Պատրիարքին

ՍՐԻՐԻՈՑ ԲԱՐՁՐ ԳՈՐԴՍՍՐԸ Ս. ՅԱԼՈՐԱՍ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Նոյեմբերի 19, Կիրակի առաւօտ, Սրիւրիոյ և Լիբանանի ծրանաական Բարձր Գործերը, Մ. Կապրիէլ Քիւռլ և Տիկինը, ընկերակցութեամբ երուսաղէմէ ծրանաական Ընդհ. Լիւսաւոտայի Մ. Ութիւրէի և Իր Տիկինը և այլ հետադրողներով այցելեցին մեր Ս. Յակոբեանց Մայր Տաճարը Ամեն. Ս. Գառնիարք Լայրը ընդունեց զիրենց եկելուցայ մուտքին: Տաճարին զանազան մասերը այցելելէն վերջ Նորին Վսեմութեան ցոյց տրուեցաւ Ս. Աթոռայ Գանձատան հնագիտական արժէք ներկայացնող եկեղեցական զգեստներ և առօրինի, որոնց զեղարուեստական ներուժեան և արժէքի մասին Բարձր Գործերը և Իր հետադրողները յայտնեցին իրենց հնազանդ: Ապա Նորին Վսեմութեանը Ամեն. Ս. Գառնիարք Լոր հետ ելան Գառնիարքարան, ուր Նորին Սրբաշնորհութիւնը կարճ ուղեւորով իր ընդհանրապէս թիւն յայտնեց Բարձր Գործերին այն համակարգին հոգածութեանը համար, զոր ցոյց տուած է սն Սրիւրիոյ և Լիբանանի մէջ գտնուող Լայ ապատանեակներուն վիճակը բարւոյցելու գործին մէջ: Նորին Վսեմութեանը իր կարգին շնորհակալութիւն յայտնեց իրեն ընծայուած պատուամետքը ընդունելութեան համար: Մենեցաւ ժամը 10 ինչոհ տպաւորութեան տակ: — Բարձր Գործերը Նայեմ. 17 Ուրբաթ օր կէտրէ վերջ ժամը 3-ին երուսաղէմէ Նահանգային Կառավարչին հետ այցելեալ էին Ս. Յարութեան Տաճարը, Շաբաթ կէտրէ առաջ՝ Ս. Առտաւածանայ Տաճարը, և Նայեմ օր կէտրէ վերջ Քիւրիւնէ մ. Ս. Ծննդեան Տաճարը, և ընդդեմուած՝ տեղւոյն հայ, յոյն և լատին Տեսուչներու կողմէ:

ՇՆՈՐՀԱՐԱՐԻ Ս. ՅԱԼԱԿ ԿԱՌՈՂԻԿՈՍԻ ԼԱՄԱՐ ՀՈԳԵՉ ԱՆԳԻՍ

Ամսոյ 12-ի Կիրակին յատուկ Ս. Գառնիարք և Հոգեհանգստան պաշտօն կատարեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Ի հանդիստ հաղաթ Ս. Սահակ Կաթողիկոսի: Բեմին վրայ զետեղուած էր պատուանշան մը՝ լրան եպիսկոպոսական խոյր եւ շուրջանակի եմիոբորն, սեւ շղարշով ծածկուած: Գառնիարքեց հանդիսի Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. իսահակեան, որ և բարոյեց նախաձեռն շաղա զիրքը: Իր բարոյը զետեղուած է Սիւնի այր թիւին մէջ: Ներքին էր խառն բաղմունքիւ: Յաւարտ բարոյի ամբողջ եկեղեցական դարձ Ատեան ելաւ շուրջապաշտօն և կատարեցաւ ծանր և հանդիսաւոր հոգեհանգստան պաշտամունց հանդիսապատմութեամբ Տ. Միքայիլ Արքեպ. Աղաւանդի:

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԳԻՆՍ Ի ՅԱՐԳԱՆՍ ՍՐՈՑԸ ԹԱՐԳՄԱՆՁԱՑ

22 Նոյ. Կիրակի, յետ միջօրէի ժամը 4-ին, Ամեն. Ս. Գառնիարք Լոր նախադառնութեամբ

տեղի ունեցաւ Գրական Հանգիս մը ի յիշատակ Սրբոց Թարգմանչաց վարդապետաց, Ս. Աթոռայ Կիւրիւնէի և Մատենադարանի մէջ: Ներկայ էր Միտրանութիւնը իր ամբողջ կազմով, ինչպէս նաեւ ժողովուրդի ընտրանի բազմութիւն մը:

Բացման խոսքն արեւ Տ. Կիրակի Ծ. Վրդ.: Սրբան հանդէսը ներկայացուց ոչ միայն իբրեւ առիթ մը պանծացանք անունը՝ որոնց յիշատակին նուիրուած է սն, այլ նաեւ այն բոլոր վաստակաւորներուն, որոնք իրենց միտքին և հոգիին կարողութիւնները ի սպաս դրած են հայ մշակութի ստեղծումին և տեղականացման:

Բացման խոսքին յաջորդեցին՝ Վրդ. Զարեղայիւն շարականը, Երզնածած ժառ. որ մինչ պատմական բաժանումով կ'երկարաձգուի Զ-ժի գաւրուան մէջ, մեր մօտ սակաւ թիւ-ժի գաւրուը կը կազմեն հայկական ժողովուրդը: Ներկայացուց ժամանակը որ եղած է յոյժ խռովայոյց, լեցուն բարբառապաշտ արշաւանքները: Կտեւաբար կարելի էր, այլ պայմաններուն մէջ, զրաւունք մեծ արգիւնը սպասել հայ ժողովուրդին, Սյուսահանգեղան այն աշխարհի զժախտ շրջաններուն իսկ իր ծոցին զուրք բերած է անհատներ որոնք նուիրուած են գրական ստեղծագործ աշխատանքին: Յիշեց թէ ուր տեղեր ծաղկած են միշին դարու հայ գրականութիւնը — Սկեւա, Երզնէ, Լադրաւ, Գլաձոր, Տաթիւ, աւելի վերջ Ամիդ, Բաղէշ և հօսակ ապա՝ Ելմիստին: Թուեց այն գրական սեռերը որոնք առաւել կամ նուազ առտեմանով ուսումնասիրութեան նիւթ եղած են և որոնցմով մեզի երկեր հասած են. — Խմաւատարական, աստուածաբանական, բարոյական, քաղաքական, մենեղական, եկեղեցական, ժիւական, սոնական և պատմական. Իւրաքանչիւր սեռի յայտնի դեմքերը իշխելով մի առ մի: Ապա աւելի հանգամանքով ծանրացաւ բանասիրական կամ աւելիվազ արքանութեան վրայ, որ առաւելաբար ժողովուրդի ծոցին մէջ իրագործուած է և որ մեր մէջ մնացած է միշտ նախադրական ձեւին մէջ՝ առանց տարածուելու հոսեւ բանաստեղծական այլ կերպաւորումներուն վրայ: Առ հասարակ այս մարդին մէջ ու փայլողները եղած են հոգեդրականները, վառելի բաղադրաբար անոնք աւելի զիրի գործածել գիտէին. Թուեց մի առ մի միշին դարու գրքիւ բոլոր յայտնի բանասիրաները ծանրանալով մասնաւորաբար նախապէս Գրական մասին: Կատկած յայտնեց որ իր անունով ցարդ հրատարակուած քառասկներ բոլոր մի քանի արդարեւ ըլլային: Այլ զանազան հեղինակներու գործեր՝ զորս հիւսնակ սիրած ըլլալով իր տեղերին մէջ ընդգործակած է որպէսզի նուազէ իր սաղին վրայ:»

«Վեժեք և հետաքրքրուինք, յարեք Հ. Ակինեան հերթափակելով իր խօսքը, անցնալ մեր գրական նշխարներով, և զանազեք ծանօթացնենք երազային, վառելի հալը տաղանձ և գործեր, որոնք արժեք ունին, Անանյի իրաւունքն է դուրս գալ ձեռագրային հանգստարաններէն, բաղդատութիւններով և ճշդութիւններով: Արժէ որ աշխատութիւնը դարձնենք անոնց, և նկատենք զանոնց հայ ժողովուրդի սիրուն ինկած մարդաբնութիւնը: Վեժեք և նաև հրապարակ բերենք ամբողջ հայ մատենադասութիւնը որպէսզի գիտունները առիթ ունենան զանոնց ուսումնասիրելով հետաքննելու մարդկային ծանօթութեան պարունակը: Վեժեք և ճանչնանք մեր պոպոկաբուն գործերը: Մենք պէտք է հայ ժողովուրդը եկած է ուսումնասիրել, գրիչ շարժող, տեղագրագործող, որ ամէն զարուն մէջ սիրով և իր նախաընկերունքը գործերը, և քունէ ընդգրկնակելով դարձ ի դուրս միջնէ. մեր օրերը հասցունցած է զանոնց, երբ բնենք այս, այն տառին մեր մեծագոյն յարգանքի տուրքը բերած զըլլանք հայ մատենադասութեան ընդհանրապէս, և միջնադարեան մասնաշարունակութեան՝ մասնաւորապէս:»

Ամեն. Ս. Գաութարքը չոր ուղղակի շնորհալուծութեան խօսքերով վերջացուց Հ. Ակինեան իր շանկան բանաստեղծութիւնը:

Մենեղուսեցաւ Տ. Վարդապետ Արեղայի կողմէ լուսաւորելու հանձնարը, և ապա ներկայացուցեցաւ Տ. Օշականի «Աստուծոյ յանձնար»^(*) օրնաւատութիւնը խոսք մը ժողովուրդներուն կողմէ:

Ամեն. Ս. Գաութարքը շայր իր գեղատնկութիւնը և շնորհակալիքը յայտնելով արուած բանաստեղծի և հանդէսին սիրաբանական բաժինը վարդապետին, հրաւիրեց Տ. Սեդէկ վրդ. Տէրտէրեանը որ փակման խօսքն ընէ:— Լեզու Տ. Սեդէկ վրդ. անդրադառնալով Հ. Ակինեանի բանաստեղծութեան, զայն ներկայացուց հմտութեամբ լեցուն խօսք մը. յետոյ յառաջ տանելով իր խօսքը բաւա. թէ մեր գրականութիւնը սիրգրէն ի վեր դարձած է երկու երկնոսեան շուրջ Գրաքար եւ Գրաքարաբար. երկուսն ալ իրարու հետ ծնած եւ շարունակած են իրենց կենսը. որքան տառն որ մեր գրական գրականութիւնը տիրապետած է, միւրս անոր շուրջին մէջ անդգնալորէն բայց գոյ շարունակուած է, ժ՛հ. զարեւն սկսած զգրաբար տկարացած և աշխարհաբար սկսած է զօրանալ...: Յետոյ յարեք թէ ինք աւբախ է որ Թարգմանչապ՝ մեր գրական գրականութեան տառնին առթիւ անիկա կ'ամբողջնայ իր միւս երեսով, աշուղական գրականութեան, շնորհիւ այս օրուան բանաստեղծութեան:

«Տէր կեցո՛ւ մայրերգով, միաբերան երգուած շայր մերջով ու Ամեն. Ս. Գաութարքը չոր Վարդապետի խօսքը փակեցաւ իշխատակի այս հանգեալը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ ԵՒ ՏՕՆԱԿԱՆՔ

Ք 5 Նոյեմ. Կիր. — Գիւտ խաչ. Ժամերգութիւն էր Ս. Գաութարքը տեղի ունեցաւ Ս. Յարութեան ճանապի մեր Ս. Լուսաւորչի եկեղեցիին մէջ, որուն կից է այն ալոր ուր գտնուած է Յիւսէօսի խաչը: «Լաւրց» յարակիցի երգեցողութեան ընթացքին, Բրիտանի խաչին մատուցել եկեղեցւոյ Ս. Սեդէկին խնդր և ժամերգութեան փոխադրուեցաւ և զետեղուեցաւ խաչի գոնուած տեղը: Ստի լրջայ Յարար Ս. Գաութարքի մեծաշուք թմբակի գատարուեցաւ Բրիտանի Ս. Գերեզմանին շուրջը, հանդիսարարութեամբ Ամեն. Ս. Գաութարքը չոր:— Ս. Լուսաւորչի եկեղեցիին նորոգութիւնը ընծագողն մասամբ աւարտած է, յառաջ, զատերը և բերել սալաբլուած են ամբակուս սալաբլներով: Կը մնան միայն զատերուն

վանդակամբուն զետեղումը և այժմեան Սեղանին վրայ հայկական կաթոլիկէ խորանի մը կառուցումը:

— Նոյն օր Ս. Հրեշտակապետաց եկեղեցին քարոզեց Տ. Գեորգ վրդ. ներկայացնելով խաչին զօրութիւնը, հակառակ անոր հեթանոսներէ յիմարութիւն և հրեաներէ զայլապաղուծութիւն նկատուելուն:

Ք 18 Նոյեմ. Եր. — Ս. Հրեշտակապետաց տօնին պատարագը մատուցուեցաւ համանուն եկեղեցիի մէջ. քարոզեց Տ. Շաւարշ վրդ. որ Ծմ, Զ. 2ի մէջ նկարագրուած Սերոյթէնեան կեցածաճէն գիտակից հաւատքի դասեր հանեց:

Ք 19 Նոյեմ. Կիր. — Ըստ ընկալելի տվորութեան ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին պատարագեց և քարոզեց նոյն վանքի Տեսուչ Տ. Վանան վրդ. Յայտ. Ա. 11ի մասին. բացատրելէ վերջը «Երեշտակ» բառին ալլաբան տառմանը, բարոյական դասեր հանեց վերոյիշեալ համարի բացատրութեան:

Ք 26 Նոյեմ. Կիր. — Ի Ս. Յակոբ քարոզեց Տ. Կիրեղ Ծ. վրդ., ներկայացուց սէրը իբրեւ ալլա տառքնութեանց կատարութեան անհրաժեշտ տարրը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Ք 23 Նոյեմ. Բշ. — Գաութարքարան այցելեցին տեղաշար իտալական Բարձրագոյն Ժողովի Նախագահն ու անդամները, շնորհաւարեցուն համար Ս. Գաութարքը չոր Գանակալութիւնը:

Ք 25 Նոյեմ. Դշ. — Ամեն. Ս. Գաութարքը շայր հետեւորդ վարդապետներով այցելեց Յունաց Գաութարքարան շնորհաւարելու համար Երուսաղէմի Յոյն Որթնոցը Գաութարքը, իր պաշտօնին Անդրդոյ Թաղաւորի կողմէ հաստատման, և իր Գանակալութեան առթիւ Տեսակցութիւնը, երկու Գաութարքներուն միջեւ եղած է եղբայրական և յոյժ սիրալիր:

Ք 30 Նոյեմ. Բշ. — Յունաց նորոգ հաստատուեալ Ամեն. Տ. Տիմոթէոս պատրիարքը, երեք եպիսկոպոսներով, արշիմանդիթներով և սարկաւազներով, փոխադարձ այցելութեան եկաւ Ամեն. Ս. Գաութարքը չոր. երկուստեք եղան մտերմական արտայայտութիւններ:

Ք 3 Նոյեմ. Ուր. — Գաութարքարան այցելեցին Հրէից զոյգ խախամապետներ Մ. Ուլիէլ՝ պետ Սեֆօրաիմներուն, և Իլլաքա շաւելի Հէրցօք Առջնապետներուն:

Ք 7 Նոյեմ. Դշ. — Ամեն. Ս. Գաութարքը շայր, հետո անենալով Լուսաւորչայան Տ. Կիրեղ Ծ. վրդ. և Աւագ-Թարգման Տ. Գաակ վրդ. փոխադարձ այցելութեան զնաց Հրէից զոյգ խախամապետներուն:

Ք 28 Նոյեմ. Կիր. — Ըստ հրաւերի Երուսաղէմի հաւաքուաբլի Վսեմ. Բիշթ-Բօշի, Ամեն. Ս. Գաութարքը շայր, հետո անենալով Լուսաւորչայան Տ. Կիրեղ Ծ. վրդ. և Կէսորեան հալը առաւ Նորին Վսեմութեան ապարանքին մէջ:— Ճալի պահուն Հ. Ամենապատուութիւնը աւելի քան ժամ մը տևող հետաքրքրական տեսակցութիւն մը ունեցաւ Նորին Վսեմութեան հետ, Երուսաղէմի պատմական իշխատակներուն շուրջ:

(*) Յն. ՍՈՂՆ 1936, էջ 85.

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ «ՍԻՈՆ»-Ի 1939 ՏԱՐԻՈՑ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. —

Ա. Այլադանան. — Տեղեկագիր քննութիւն	
Գ. Արշակ Ոսփրատեանի «Հայոց հնագոյն պատմութիւնն ու լեզուն ըստ սեպագրութիւններէ» գործին.	55 208, 232, 273, 297
Ժիրաշ Սրկ. Ոսկանան (Քրգմ.). — Հեղինակական կրօնք.	51, 26, 398
Հ. Պերպերեան. — Փուլակ.	398
Պրն. Ն. Աղանց. — Հ. Արիւնեան պատասխանին պատասխան.	10

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ. —

Արտն Սրկաթ. — Կորստած աղան. — Տեսիլք.	222
Նորիվարդ. — Մամարուհին.	255
Ափ մը ցորեն.	285
Մեծիմա Ձէլէպի. — Գուսանեղբորին.	394
Թ. (Թորգոմ Պարթաբ). — Անձինք նուիրեալք.	9
Ա. de Musset. Երբ դարձան չի... (Քրգմ.).	46
Աղօթք վան շայ եկեղեցւոյ.	79
Նոր. Արիւն. — Ներսիս հօգրքին.	324
Ն. Կառաթ. — Աստեղային. — Տաճարն Նայիական	223
Պ. Կառաթ. — Մեծիմա.	198
Սայգային.	323
Վարդգէս Սրկ. Յերուան. — Կոչում.	287

ԳՐԱԿԱՆ. —

Ե. Պալան. — Վկայութիւններ.	200, 258
Երեմիա Ձէլէպի.	331, 367

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ. —

Ե. Ռ. Պերպերեան. — Հոգեպաշտութեան կամ խորհուրդ ինքնչանս եւ միթիարութեան.	224
Երեմիա Ձէլէպի. — Պաշտութեան (հայացում). — Իրականութեան կարգը (W. Temple).	293, 217
Պ. Ռ. — Կրօն (Քրգմ.). Թորգոմ Պարթաբին.	47
Վարդգէս Սրկ. Յերուան (Քրգմ.). — Տաւորութիւնը եւ ժամանակը (հեղ. Յովսէփ Սվանան).	23

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ. —

Ապրիլ.	
Նուիրակ Գարեգին Արքեպ. Առաջնորդ Ամերիկայի Հայոց.	
Ազգապահպանութեան խնդրոյն առթիւ.	

Խմբ. — Ամեն. Տ. Թորգոմ Արք. Գուշակեան Պարթաբը Երուսաղէմի 1931-1939.	76
Նորիւնի Գահակալ.	182
Յարութեան գործութիւնը.	193
Հոգեպաշտութեան.	213
Ազգային եկեղեցի.	245
Հոգեւոր հոսիւթք.	277
Վարդապետ մըն ալ.	312
Գահակալութիւն Ամեն. Տ. Միսրոպ Ս. Պարթաբը Հոր.	341
Արթ. մըն ալ թափուր.	374

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ. —

Տ. Թորգոմ Արք. Գուշակեան.	76
Ամեն. Տ. Միսրոպ Արք. Նշանեանի.	184
Տ. Կրիւնի վրդ. Խորաշէնեանի.	241
Տ. Սահակ կաթողիկոսի.	376

ԿՐԾԱԿԱՆ. —

Արտն Սրկաթ (Տ. Թորգոմ Պարթաբ). — Յիսուսի ծնունդը.	5
Նորիւն Վրդ. — Հայ եկեղեցի.	248
Թարգմանիչներ.	387
Տ. Թորգոմ Պարթաբ. — Կրօնական խաղաղութեան մը թարգմանում մին մեծագոյն ազգ. կը.	42
Մ. Ս. Ն. (Հայացում). — Թիւերը Ս. Պարթ մէջ.	384
Շաւարս Վրդ. — Վարդապետ Մեծիմա.	280
Վերափոխում.	314
Երեմիա Ձէլէպի. — Լեզուաւորութիւն.	219
Գրիգորիական մարգարէութիւն.	251, 283

ՄԱՍՏԵՆԱԾՍԱԿԱՆ. —

Ա. Ս. Վ. — Գահեմականք.	270
Թարգմ. Վրդ. Ապառան. — Սպիտակ արդարութիւն.	396
Ե. Օսման. — Երեմիա Ձէլէպի.	331
Տ. Ռ. Վ. — Հայական երեք մեծ վանքեր.	20
Պալան Վրդ. Թումանյան. — Հայ եկեղեցւոյ կան երգեր.	268

ՊԱՏՄԱԿԱՆ. —

1 Արապական Վրդ. — Յովհաննէս Եպ. Ղաւարեան.	228, 284
3 Մ. Վրդ. Աղաւանդ. — Մովսէս Վրդ. Տաթեւացի.	16

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ. —

ՅՈՒՆՈՒԱՐ. — Ամսօրեայ լուրեր.	29
ՓԵՏՐՈՒԱՐ. — » » »	61
ՄԱՐՏ — ԱՊՐԷԼ. — » » »	178
ՄԱՅԻՍ. — » » »	211
ՅՈՒՆԻՍ. — » » »	243
ՅՈՒԼԻՍ. — » » »	276
ՕԳՈՍՏՈՍ. — » » »	301
ՍԵՊՏԵՄԲԵՐ. — » » »	339
ՀՈԿՏ. — ՆՈՅ. — » » »	370
ԴԵԿՏԵՄԲԵՐ. — » » »	401

ՀԱՆԳԻՍ. —

Տ. Երուանդ Արք. փերսանդան.	30
Տ. Վրթանէս Վրդ. Դասապետ.	31
Տ. Թորգոմ Պատրիարք.	70
Պիոս ԺԱ. Պապ.	179
Տ. Նիկողայոս Էվանկէլիստ.	180
Տ. Միրոն Գրիթիա.	180
Յովհաննէս Գուշակեան.	180
Հայկազուն Քէշիշեան.	368

ՄՍ. ՀԱԳՐԱԿԱՆ. —

Սղիե Վարդապետ. — Եկեղեցական.	81
Յիւրան Վրդ. — Սրբազան պիւրիստը.	85
Արքուն Վարդապետ. — Ուսուցիչը.	88
Յ. Օսական. — Գրագետը.	94
Ե. Ռ. Պերդէրեան. — Մարդը.	105
Ասեան Թէլեան. — Մեծ բարեկամս՝	
» քանի մը պզտիկ յուշեր.	110
Պրոֆ. Ն. Աղունց. — Տ. Թորգոմ Սրբազան	
Պատրիարքի յիշատակին.	112
Ն. Աղբալեան. — Յարգանքի խօսքեր՝	
Տ. Թորգոմ Պատրիարքի մահուան առթիւ.	113
Յիւրան Կամատարեան. — Թորգոմ Սրանչիլին.	114
Մ. Տառնեան. — Սուգի եւ սփոփանքի խօսքեր.	116
Վ. Մալեզեան. — Մտերիմ յուշեր՝ Սրբազան	
» բարեկամս.	117
Ջուղայեցի. — Ջուղայեցոց արքունիները.	119
Հայկազուն Վրդ. — Էւ Էր անդ գերեզման նոր.	121
Պարզե Վրդ. Վրթանէսեան. — Յարգանքի	
սուրբ մը՝ Լուսանոցի Սրբազանին.	122
Սեռափէ Վրդ. — Վերջին երեքը.	123
Շաւարո Վրդ. — Գրասեղանի մարդը.	124
Վարդգէս Մրկ. Ռէրուսեան. — Խուզարի գիշեր.	125
Հայրիկ Վրդ. — Իր հմայքը.	126
Յիւրան Վրդ. — Դամբանագիր՝ ի յուշ անմո-	
ռացութեան.	127
Յովսէփ Մրկ. Ապասեան. — Մեծ զազդիկ	
առջեւ.	128

Պ. Հայկազուն. — Դեռ Կ'որենեմ.	129
Հմայիակ Մրկ. Խմբողեան. — Գեորգոսը.	130
Հրազդան Արք. Վրդ. — Գրորարին վարպետը.	131
Կարապետ Մրկ. Միրունեան. — Վերջին դասը.	133
Աւետիք Մրկ. Վարդապետ. — Վիշապ եւ յոյս.	134
Վիշապ Մրկ. Օ. Ոսկանեան. — Հոգեւոր որ-	
դիւթիւն.	135
Դրանիկ Մրկ. Վարդապետ. — Էջար իմ եւ	
մայր իմ թողին զիս	136
Սարգիս Մրկ. Մ'ունեան. — Փոսին առջեւ.	137
Անդրանիկ Մրկ. Ասեանց. — Հայրը՝ Ուսուց-	
չիմ մէջ.	138
Լեւոն Բաւապետ. — Վերլիշուհի՝ Հոգեւոր	
Տ. Թորգոմ Պատրիարքին.	139
Ա. Զօգանեան. — Մեծ հայ զէմք մը.	140
Աւետիք Մրկ. Մանուկեան. — Օրիգը որդէ.	144
Շնորհ Վրդ. — Տաղապ, Վախճան եւ Թաղում՝	
Երանանդի Տ. Թորգոմ Պատրիարքի.	146-176
Ն. Կասար. — Ամեն Տ. Թորգոմ պատրիարքի	
յիշատակին.	199
Թէոդորոս Ծ. Վրդ. Իսահակեան. — Շնոր-	
հազարը Տ. Սահակ կաթողիկոս.	380

ԱՐԳԻՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ. —

Յ. Արքուն Վարդապետ. — Եկեղեցի եւ Գե.	
սուրբիւն.	288, 325, 390

ԱՅԼԵՒԱՅԼԻՔ. —

Կ. Յ. Բ. (Հրաւ.) — Ներսէս Աշտարակեցիի	
քանի մը նամակները.	26
Ամեն Ս. Պատրիարք Հօր նամակը կաթողիկո-	
սական տեղակալ Տ. Գէորգ Արք. ի.	309
Սրապին կողմ Պաղեստինի եւ Անդր-Յորդանանի	
հայրենեան.	311
Ընարուքիլ Պատրիարքի Առաքելական Ս.	
Աթոռոյ երուսաղէմի.	187
Շնորհաւարական նամակներ.	238, 272, 300
Եօթը եւ ինը.	237
Նոր ծնունդարարութիւնը.	27, 301
Ամեն Ս. Պատրիարք Հօր վերադարձը եզրա-	
տուէն.	28
Լուրեր արտասահմանի Սաղիմական վարդա-	
պետներէն.	59, 300, 339
Ջայն մը Էջմիածինէն.	61
Ս. Յորդանան. Տաճարի վերաշինութեան համար.	22
Նուիրատուութիւնը.	32
Ա. Վ. — Փրկարար վարակում.	41
Պաշտօնական յայտարարութիւն.	64
Կանոնադրութիւն «Սրբոց Թորգոմնայեց-Դորեան	
Գրական Մրցանակի».	65